

3203

31K M

4-68

1974

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՄԱՆԻՔԵՄՏԸ

(ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

82002

509

2010

3ԿՄ

4-68

ԹԻՖԼԻՍ-1924

3KII
4-68
2

պր.

300
1425-40

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ



ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՄԱՆԻՓԵՍՏԸ

ՈՒՂՂԱԾ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԴՐՈԼԵՏԱՐԻԱՏԻՆ

81021
1924

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՄԱՐՏԱԿՈՉ»
ԹԻՖԼԻՍ № 27 1924

57277-աւ

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՄԱՆԻֆԵՍՏԸ

ՌԻՂՂՎԱԾ ՀԱՄԱԵԽԱՐՀԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻՆ.

Ընդունված ե միաձայն հուլիսի 5-ին Կոմինտերնի
համաշխարհային 5-րդ կոնգրեսում:

Ընդգեմ պատերազմի: Ընդգեմ բուրժուազիայի: Ընդգեմ սոցիալ դաւաճանու-
թյան: Հանուն համաշխարհային հեղափոխութեան: Հանուն պրոլետարիատի դե-
կտատուրայի: Հանուն կոմունիզմի: Իմպերիալիստական պատերազմի տա-
նամակի առթիւ:

I

Տասը տարի յե անցել այն ուրից, ինչ բուրժուազիան արձա-
կեց իմպերիալիստական դժոխային ուժերի սանձերը:

1914 թվի ոգոստոսի 1-ին սկսվեց պատմութեան մեջ խոշո-
րագույն մարդկային սպանդանոցը: Իշխող դասակարգերն և նրանց
ռազմագետները կարծում էին, վոր պատերազմը մի քանի ամ-
սում կը վերջանա: Սակայն նրանց ստեղծած դեպքերը կարճ ժա-
մանակից հետո իրենց սպասելիքներից անցան: Բանակների թվերն
անընդհատ աճում էին, և իրար դեմ առ դեմ դիրք մտնում:
Յկրոպայի և նրա սահմաններից ել ավելի հեռու, ամբողջ աշխա-
տանքային յեռանդը քնում եր պատերազմի պետքերին: Ստեղ-
ծում էին, վորպեսզի քանդեն, և քանդում էին, վորպեսզի վոչն-
չացնելու նոր զենքեր ստեղծեն: 4 տարի 3 ամիս և 26 որ տեկեց
այդ ստոր ու անմիտ պրոցեսը, վորի մեջ կապիտալիստական
հասարակութունը գտավ իր ավարտված արտահայտութունը:

Պրոլետարները շինում էին վոչնչացնող մեքենաներ: Պրոլե-
տարները գյուղացիների հետ միասին այդ մեքենաները գործա-

դրութեան մեջ եյին դնում: Զանազան ազգութիւններն պրոլետարներն ու գյուղացիները վոչնչացնում եյին միմյանց: Այժմ, յերբ մենք հետ ենք նայում, ամեն մեկը մեզանից հարց ե տալիս իրեն, ինչպես կարելի յեր թույլ տալ այդ անմտութիւնը: Բայց ավելի կարեւոր և սուր ե յեկրորդ հարցը, թե ապագայում չի՞ կարող արդոյք կրկնվել նույնը:

Պատերազմական այդ պատուհասը պատրաստվում եր շատ վաղուց: Առաջավոր բանվորները նախատեսում եյին նրա անխուսափելիութիւնը և զգուշացնում աշխատավոր մասսաներին: Կանխել վերահաս պատերազմը, անհնար դարձնել ընդհանրապես պատերազմը կարող եր միայն հեղափոխական պայքարը, միայն աշխատավոր մասսաների ընդվզումն իմպերիալիզմի դեմ: Այդ տեսակի ընդվզումը, վորքան ել խիստ ու դաժան ձևեր ունենար, այնուամենայնիվ չիւր կարող պատճառել այն մարդկային զոհերի և նյութական փրկուածի մի հարյուրերորդական, մի հազարերորդական մասը, ինչ վոր առաջ բերավ պատերազմը: Սակայն ապստամբութիւն տեղի չունեցաւ: Սոցիալիստական կուսակցութիւններն իրենց ճնշող մեծամասնութեամբ վնչ միայն կոչ չեյին անում բանվորին՝ հեղափոխական պայքար մղել ընդդէմ պատերազմի, այլ, ընդհակառակը, միաբանեցին իրենց կառավարութիւններին հետ, պատերազմը հայտարարեցին արդար ու ճշմարիտ պատերազմ, և կոչ եյին անում աշխատավոր մասսաներին՝ աջակցել պատերազմին: Սոցիալիստների այդ աջակցութեան շնորհիւ միայն բուրժուազիան կարողացաւ մասսաների սանձն իր ձեռքը պահել և առաջ տանել պատերազմը:

Սոցիալիստական կուսակցութիւններն դավաճանութեան շնորհիւ միայն բուրժուազիան կարողացաւ 4 տարուց ավելի յերկարաձգել պատերազմը: Սոցիալ-պատրիոտ ղեկավարների միլիտարիզմի մագործների հետ գործակցելու շնորհիւ միայն մարդկութիւնը կորցրեց 10 միլիոն հոգի և ստացաւ մի քանի միլիոն հաշմանդամ:

Շեյդեմանի և Երերտի, Ռենոդելի և Լոնգելի, Հենդերսոնի և Վանդերվելդի ցած տեսակի սպասավորութեան շնորհիւ միայն բուրժուազիան հնարավորութիւն ունեցաւ քայքայել ու հյուծել Յերոպան և վոչնչացնել այն ամենը, ինչ վոր դարերի, աշխատանքի արդուներ եր:

1914 թվի ոգոստոսի 1-ն իմպերիալիստական պատերազմի առաջին օրն ե, սոցյալ ղեմոկրատական առաջնորդների բուրժուա-

զիային բացարձակ կերպով անձնատուր լինելու օրը, վոր մարդկային պատմութեան մեջ առմիշտ կ'մնա, իբրև ամենասև, ամենաշարագուշակ ամենամոթալի օրը:

Բանվորներ և բանվորուհիներ, գյուղացիներ և գեղջկուհիներ հիշեցեք, թե պատերազմի առաջին օրերին ինչ եյին խոստանում իշխողները:

Ձեզ ասում եյին, թե՝ այդ պատերազմը ժողովրդին տալու ե ապահով գոյութիւն, ձեզ խոստանում եյին, թե պատերազմի հետեանքը լինելու յե միլիտարիզմի ճնշման վերացումը: Ձեզ հավատացնում եյին, թե այդ պատերազմը լինելու յե վերջինը: Այսպես եյին ասում ձեզ թագավորները, նախագահները, բուրժուական միլիտարներն ու լրագրողները: Այդ նույն բանն եյին ասում ձեզ յուրահատուկ սոցիալ ղեմոկրատները և արհեստ. միութիւններն պատրիոտ պարագլուխները: Այժմ այդ պատերազմի տասնամյակի օրը, դուք աշխատավորներդ կարող եք լիակատար կերպով հաշվի առնել նրա հետեանքները: Դուք տեսնում եք, թե վորքան անամոթ կերպով շահագործեցին ձեր վստահութիւնը: Նույնիսկ այդ պատերազմում հաղթանակող պետութիւններն այսօր ավելի չքավոր են, քան պատերազմից առաջ: Բայց յեթե ձեզ խաբեց բուրժուազիան, այդ հասկանալի յե, բուրժուազիան մեր անհաշտ և անողոր թշնամին ե: Սակայն ձեզ խաբեցին և նրանք, վորոնց դուք ձեր առաջնորդներն եյիք համարում: Սոցիալ-գեմոկրատները, վորոնք բուրժուաների դեմ արտասանած իրենց ճառերով զրաւել եյին բանվորների վստահութիւնը, 1914 թվի ոգոստոսի 4-ին բուրժուազիայի կողմն անցան և իրենց հեղինակութիւնն ու կշիռը գործ դրին բուրժուազիային ոգնելու և սպանդանոցի գործը մինչև վերջը տանելու համար: Սրանք են փատերը, այս ե մերկ ճշմարտութիւնը:

Սոցիալ-գեմոկրատները խոստացան, թե պատերազմի հետեանքը լինելու յե ազգերի արդար, պատվավոր ու ղեմոկրատական խաղաղութիւնը: Նրանք սուտ եյին խոսում, նրանք գիտակցաբար և հաշվով խաբում եյին ձեզ: Նրանք չեյին կարող չգիտնալ, վոր խաղաղութեան պայմանները թելադրելու յեն հաղթանակող իմպերիալիստները: Ամոթալի պատերազմը, վորի ղեկավարութիւնը սոցիալ-գեմոկրատների ամոթալի աջակցութեամբ իր ձեռքն եր առել բուրժուազիան, կարող եր միայն ամոթալի խաղաղութեան հանգել: Այդ խաղաղութիւնը կնքվեց Վերսալում, վորտեղ հաղթանակող գիշատիչն իր վտարը զրել եր հաղթահարված գիշատի-

չի կոկորդին: Գերմանիային և նրա դաշնակիցներին ձգմեցին ու բզկտեցին:

Վորպեսզի կարողանան արդարացնել գերմանական ժողովրդի ստրկացումը, վորն ավելի ստոր էր, քան ինքը պատերազմը, հաղթանակող յերկրների սոցիալիստները՝ Հենդերսոնը, Ռենդելը, Վանդերվելդը և մյուս յերկրներինը իրենց բուրժուազիայի հետևից կրկնում էին. «Գերմանիան պատժված է նրա համար, վոր ինքն էր ցանկանում պատերազմել, և ինքն ստեղծեց պատերազմը»: Վորպիսի կեղծավորութուն, վորպիսի բթամտութուն: Յեթե անգամ ճիշտ է, թե պատերազմի պատասխանատուն միայն Հոհենցոլլերն ու Հաբսբուրգն են, միթե կարելի չե պատժել մի ժողովրդի նրան ճնշող թագավորական տան չարագործության համար: Միթե կարելի չե խեղդել գերմանական պրոլետարիատին գերմանական բուրժուազիայի վոճագործության համար: Անտանդի յերկրների սոցիալիստներն արդարացի չեն համարում գերմանական բանվորներին, նրանց կանանց ու յերթխաներին զրկել հացից ու կաթից, իբրև պատիժ առ այն, վոր գերմանական բուրժուազիան վոչնչացրել, հաշմանդամ է դարձրել իրենց յեղբայրներին, հայրերին և ամուսիններին:

Բայց միթե առողջ դատող և ազնիվ մարդը կարող և գոնե մի րոպե մտածել, թե պատերազմի պատասխանատվութունն ընկնում է բացարձակապես միայն Գերմանիայի ե Ավստրո-Հունգարիայի վրա:

Միթե մենք չենք ճանաչում գաղութային ժողովրդներին ստրկացնող անգլիական բուրժուազիայի անկշտում իմպերիալիզմը: Միթե մենք չգիտենք Ֆրանսիական բորսայի զզվելի ագահությունը: Միթե ցարական Ռուսաստանը չէր վոր Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակցությամբ՝ ձգտում էր ձեռք գցել Պոլիսն ու Նեղուցները: Իմպերիալիստական պատերազմը յերկու կողմերի սանձարձակ ախորժակների ընդհարման հետևանքն էր, Բոլորն էլ ուզում էին աշխարհը նոր կերպ բաժան բաժան անել, բոլորն էլ ձգտում էին նոր պատառ ձեռք գցել: Բոլորն էլ իրենց ձեռքը մեկնել էին ավերի ու կողոպուտի: Յերկու բանակների իշխող զսակարգերն էլ պատասխանատու չեն պատերազմի, նրա չորսամյա տևողության համար, նրա զոհերի և ավերածությունների վերսպյան անմիտ յելքի համար: Ավելի պակաս պատասխանատու չեն և՛ սոցիալ-դեմոկրատ քաղաքագետները, արհեստ. միությունների պատրիոտ ղեկավարները, վերսպյան հաշտու-

թյան սոցիալիստական նոտարները, իմպերիալիզմի վարձկան և կամավոր գործակալներն ու բուրժուազիայի սպասավորները, վորոնց ճակատին, իբրև նախատինքի կնիք դրոշմվել է այդ պատասխանատվությունը: Մի յերկիր միայն չե՛ր մասնակցում Վերսալի խայտառակությանը՝ վոչ իբրև հաղթահարված և վոչ էլ իբրև հաղթող: Հեղափոխական Ռուսաստանի աշխատավոր մասսաները, վորոնց ղեկավարությունն իր ձեռքն էր առել կոմունիստական կուսակցությունը, կործանեցին բուրժուազիային, իշխանությունն իրենց ձեռքն առան և յերկիրը դուրս բերին պատերազմի դժոխային վոլորտներից: Բոլշևիկների կառավարությունն բաց արավ ցարական դիմադրության յերկաթյա պահարանները, հրապարակեց գաղտնի պայմանագրերը և ցույց տվավ, վոր Անտանտի կառավարություններն էլ նույնքան մեղավոր են, վորքան Հոհենցոլլերի և Հաբսբուրգի կառավարությունները:

Այժմ արդեն անվիճելի չե, վոր յեթե Ռուսաստանը շարունակեր Անտանտի հետ միասին կռվել, ինչպես այդ ցանկանում էին սոցիալիստ-հեղափոխականներն ու մենշևիկները, վերջը հյուժված յերկիրը պետք է դառնար Ֆրանս-բրիտանական մի գաղութ, մի հյուսիսային Հնդկաստան:

Ռուսաստանն իր փրկությունը գտավ միայն Հոկտեմբերյան հեղափոխության միջոցով:

Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի աշխատավորները նույնպես հեղափոխության հետևանքով ապստամբության դիմեցին: Հին թագավորական տները գահընկեց յեղան, բայց սոցիալ-դեմոկրատիան բանվորական մասսաներին կանգ առնել տվավ հեղափոխության հենց առաջին շրջանում:

Յեթե Գերմանիայի կալվածատերերն ու կապիտալիստները 1918 թվի նոյեմբերից հետո կարողացան պահպանել իրենց հալածություններն ու իշխանությունը, դրանով նրանք միանգամայն ու ամբողջովին պարտական են Շեյդեմանին, Երբերտին, Կաուցկուին և գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մյուս առաջնորդներին: Նույն մարդիկը, նույն քաղաքագետները, նույն գավաճանները, վորոնք չորս տարի շարունակ ոգնում էին Հոհենցոլլերների արյունալի խմբակին՝ վոչնչացնելու գերմանական ժողովրդին, 1918 թվի վերջերին արգելք հանդիսացան աշխատավորներին՝ կործանելու շահագործողներին:

Յեթե պատերազմից հետո հիմնաստան Յեվրոպայում մնաց կապիտալիզմի իշխանությունն, այդ ամբողջովին բուրժուազիայի

դռները պահնորդ շղթայակապ շան՝ Յերկրորդ Ինտերնացիոնալի մատուցած ծառայությունն է:

Գերմանիան տնտեսապես հետ ե մղված: Կայսերական Ավստրո-Հունգարիայի բեկորներն իրարից անջատված են մացառուտ ցանկապատով:

Դրությունն ավելի սարսափելի յե բալկանյան թերակղզում: Ֆրանսիան հեծում է միլիտարիզմի լծի և պատերազմական պարտքերի ծանրության տակ: Իտալիան թուլացել և նորանոր ցնցումների յե յենթակա: Անգլիան իր մինչպատերազմական տնտեսական հզորության մասին կարող ե յերազել միայն: Տևական անգործությունը, իբրև վորդ, իբրև ինքնաբույս պալար ուտում ե Յեվրոպայի մարմինը: Յեվրոպական բանակների և չավատորմիդների թիվն ավելի պակաս չե, քան 1914 թվի ոգոստոսի 1-ի նախորդարդացման, անհամեմատ ավելի յեն շատացել: Պատերազմը սարսափելի կերպով հարվածեց Յեվրոպայի, Ամերիկայի և ամբողջ աշխարհի գյուղացիությանը: Ամեն մի յերկրի բուրժուազիա իր գյուղացիությանը խոստանում եր, թե պատերազմի հետևանքը գյուղատնտեսության բարձրացումն ե լինելու: Բուրժուազիան գյուղացիության հավատացնում եր, թե այս «վերջին պատերազմից» հետո նրա ուսերից ընկնելու և միլիտարիզմի ծանր լուծը: Բանից դուրս յեկավ, վոր գյուղացիությունը կրկնակի յե խաբված:

Յեթե պատերազմի սկզբում ունեվոր գյուղացիությունը թանգ գնեով եր ծախում իր մթերքները և արժան փողերով վճարում իր հին պարտքերը, թվում եր, թե գյուղացիությունը հարստացել ե. դրամի անկայուն-դառնալուց հետո, գյուղացու շահն ու ոգուտը սապնի բշտիկների վերածվեց: Յեվրոպայի տընտեսական անկումը նվազեցրեց գյուղատնտեսական մթերքների պահանջը և հարվածեց վոչ միայն յեվրոպական գյուղացիությանը, այլ և ամերիկական ֆերմերությանը, հասցնելով նրան մասսայական սնանկության դուռը: Այն ինչ՝ միաժամանակ միլիտարիզմը դառնում եր ավելի պահանջկոտ, ավելի շոայլ ու վատնող: Պատերազմական տուրքերի ծանր բեռն սպառնում ե վերջնականապես ճգմել գյուղացու վոլնաշարը:

II

Ֆրանսիական զորքերի անցյալ տարվա Ռուրի գրավումը իմպերիալիստական պատերազմի անմիջական շարունակությունն

եր: Հաղթողը վերջին հարվածներն եր հասցնում պարտվողին: Ռուրի գրավումը յեվրոպական տնտեսությանը նոր հարված հասցրեց և առաջին հերթին նպաստեց Գերմանիայի սարսափելի քայքայմանը և նրա ժողովրդական մասսաների աղքատացման հետագա աղբյուրը դարձավ: Բայց այդ գրավումը գցեց ֆրանկի արժեքը և ցույց տվավ, վոր Ֆրանսիայի տնտեսությունն իր ծանր ինդուստրիայով անկարող ե Յեվրոպայի վերաբերմամբ պահել ռազմական դիկտատուրան: Սակայն ինչպես յեղավ, վոր ֆրանսիական բուրժուազիան պատերազմի ընթացքում ալդքան վոճրագործություններով հուշակվելուց հետո, իր զորքին նորից կարողացավ դրդել՝ Ռուրի վոճրագործությունը կատարելու: Ինչպես յեղավ, վոր Ֆրանսիայի և ամբողջ աշխարհի աշխատավոր մասսաները չխանգարեցին այդ նոր ավազակային հարձակումը: Բանվորներ, մտածեցեք այդ մասին, և ձեզ համար պարզ կը լինի, վոր Ֆրանսիայի և Գերմանիայի սոցիալիստների աջակցությամբ միայն բուրժուազիան հնարավորություն ստացավ կատարել Ռուրի պատերազմական ոպերացիան, հետևապես և առաջ բերել Յեվրոպայի հետագա քայքայումը:

Այստեղ մենք նորից կրկնում ենք, յեթե Ֆրանսիայի և Գերմանիայի բանվորական մասսաները համաձայնվեյին հեղափոխական ապստամբությանը զոհաբերել այն ամենն, ինչ վոր զոհվեց միայն Ռուրի գրավմանը, բուրժուազիան կործանված կը լիներ, միլիտարիզմը ճնշված ու Յեվրոպայում այժմ կը հաղթանակելին՝ խաղաղություն և աշխատանքը: Սակայն հենց այդպիսի պատասխանատու բույներին, յերբ հարցը վերաբերում ե բուրժուազիայի կյանքի ու մահվան խնդրին, յերբ վճովում ե աշխատավորների բաղդը, սոցիալ-դեմոկրատները չարախինդ կերպով խախտում են պրոլետարիատի հեղափոխական ճակատի միասնակամությունը, բանվորական շարքերում սերմանում են անվճռականություն, առաջ բերում վոգու անկում, մեկուսացնում են կոմունիստական կուսակցությունը և այդպիսով բուրժուական բեռեցիայի համար հաղթանակ նախապատրաստում:

Յեվ կարծես թե վերջին տասնամյակում կապիտալիզմին սոցիալ դեմոկրատների մատուցած մեծ ծառայություններն հավերժացնելու համար՝ յեվրոպական բուրժուազիան արյունալի տասնամյակի հոբելյանի որը մոտենալու հետ մեկտեղ՝ իր վաստակավոր, փորձված, հավատարիմ մենշևիկներին իշխանության զլուխ ե կանգնեցնում մասամբ կամ ամբողջովին. ներ-

կայումս Անգլիայում ղեկի մոտ կանգնած և այսպես կոչված բան-
վորական կուսակցության կառավարությունը. Ֆրանսիայում
ձախ բլոկի մինիստրությունը, վոր կարող և իր գոյությունը
պահպանել միայն սոցիալիստների աջակցությամբ: Գերմանիա-
յում սոցիալ դեմոկրատիան բուրժուական կառավարության հե-
նարաններից մեկն է: Դանիայում իշխանության գլուխն և անցել
Սաաունինգի սոցիալ-դեմոկրատական մինիստրությունը: Բելգի-
այում իշխանության ճանապարհը փակված է Վանդերվելդի կու-
սակցության առաջ, և նա փութկոտ կերպով մաքրում է իր ու-
ղին: Նույնիսկ Իտալիայում Մուսսոլինիի դիկտատուրան արդեն
ճնշում է բուրժուազիային և վերջինս Մուսսոլինիի իշխանության
բեֆորմատորական փոխանորդ և պատրաստում: Ֆաշիզմը կարծես
թե վերջացրել է իր անելիքը և ժամանակավորապես հեռանում է
բեմից: Ամենածանր ոլորին, յերբ պրոլետարիատը սասանեցրել
էր կապիտալիստական հասարակակարգի հիմքերը, յերբ իշխա-
նությունը խուսափում էր գլխակորույս բուրժուազիայի ձեռքից,
ֆաշիստական բանդիտներն էին, վոր իրենց ծառայություններով
ոգնության յեկան բուրժուազիային, իրենք անցան մանկացած
պետության տեղը, մի կողմ թողին պարլամենտականության և
լեգալության բոլոր պայմանականությունները, դիմեցին ջարդի,
կոտորածի, հրացանաձգության, հրձիգության և ավերածության:
Քաղաքացիական կռիվի ամենածանր ժամերին ֆաշիզմը կապիտա-
լի կարևորագույն զենքն էր: Կապիտալն ունի և մի ուրիշ զենք,
դա սոցիալ-դեմոկրատիան է: Վճռական բուլեյին սոցիալ-դեմո-
կրատիան հավաքում է իր բոլոր ուժերը, վորպեսզի կարողանա
դիմադրել բուրժուական պետությունների վրա պրոլետարիատի
գործ դրած ճնշմանը: Յերկար և անողուտ ճառերի մեջ մեղադը-
րելով ֆաշիզմին, հանդիմանելով բուրժուազիային յուր դաժա-
նության համար, նա միաժամանակ կոչ է անում բանվորներին
հեռու կենալ «քաղաքացիական կռիվի սարսափներից», խափում է
պրոլետարիատին, կեղծում է, շողջորթում, քնացնում նրան,
թունավորում նրա դիտակցությունը, հաշմում նրա կամքը: Հոգե-
պես զինաթափ և անում պրոլետարիատին և, վերջ ի վերջո, նը-
րան ֆաշիզմի ձեռքը մատնում: Այդպես է յեղել Հունգարիայում,
այդպես է յեղել Իտալիայում, այդպես է յեղել Գերմանիայում:

Յերբ բուրժուազիան արդեն համոզվում է, վոր ֆաշիզմի և
սոցիալ-դեմոկրատիայի միացյալ ջանքերով պրոլետարական հե-
ղափոխական գրոհը նորից հետ է մղված, այն ժամանակ նա հար-

մար է գտնում սահմանել ավելի նվազ-արյունալի, ավելի պակաս
պրովակացիոն, ավելի նորմալ, այսինքն լեգալության ցնցոտինե-
րով ծածկված մի բեժիմ: Մենք տեսնում ենք, թե ինչպես են
փոփոխվում դեկորացիաները: Դեռ յերեկ նախարեմը գրավել էին
ֆաշիստներն իրենց ատրճանակներով, թրերով, վառված պատ-
րույգներով, իսկ սոցիալ-դեմոկրատները բեմի հետևը տանում
էին ոժանդակ աշխատանքներ: Այսօր յերբ ըստ յերևույթին ան-
միջական վտանգն անցած է համարվում, բուրժուազիան ըշտա-
պում է բեմի յետևը տանել ֆաշիստներին և նախարեմ հանել
խաղաղության, դեմոկրատիայի և լեգալության առաքյալ մենշե-
վիկներին, արմատականներին, և բեֆորմատորականներին: Բուր-
ժուան ասում է մենշևիկին—քո հորեղբոր վորդի ֆաշիստները
չկարողացան պահպանել պետք յեղած չափը, պետք է հարթել և
թուլացնել նրանց աշխատանքների հետևանքները, պետք է մաք-
րել նրանց արդեն խիստ վառ-կարմիր արյան հետքերը, պետք է
հանգստացնող բալասան դնել մղկտացնող վերքերի վրա, պետք
է ամենափառված սրտերի մեջ նոր հույսեր կամ հին անուրջներ
զարթեցնել, ապա թե վոչ անհուսությունը կը փոխվի հուսահա-
տության, իսկ հուսահատությունը կարող է փոխվել հեղափոխա-
կան ցասումի: Ահա թե ինչու, ահա թե ինչ պատճառով իշխա-
նության գլուխ են կանգնում, կամ մոտենում իշխանությանը՝
Մակդոնալդները, Բլյումինները, Սաաունինգները, Վանդերվելդները,
Շեյդեմանները և Վիլսերը: Իսկ այդ ժամանակամիջոցում միլի-
տարիզմն ավտոմատ կերպով շարունակում է իր աշխատանքը:
Մակդոնալդի կառավարության որոք նոր պատերազմական նավեր
են շինվում, ընդարձակվում է տանկերի կառուցումը. աճում է
ողային տորմիդի թիվը, կրկնապատկվում են պատերազմի քիմի-
ական միջոցները և այդ բոլորն ինչու համար: Չը լինի դրանցով
անգլիական պրոլետարիատը պաշարելու յե կապիտալի դեմ: Վոչ,
այդ բոլորն արվում է նրա համար, վոր անգլիական կապիտալն
իշխե Հնդկաստանի, Յեզիպոսի, Իրանիայի և անգլիական
պրոլետարիատի վրա: Առանց վորեւե զիջումի հոգուտ աշխատա-
վորների՝ բուրժուազիան մենշևիկների ձեռքով շարունակում է
ամրացնել իր ռազմական ողային մեքենաները. սոցիալիստների
վրա հենված երրիոյի մինիստրությունը շարունակում է Միլե-
րանի և Պուանկարեյի ռազմական ու միջազգային քաղաքականու-
թյունը: Յերբ մենք կոմունիստներս պնդում էինք, թե Ռուսի-
գրավման պատասխանատվությունը ընկնում է վոչ միայն բուր-

ժուազիայի, այլ և սոցիալ-դեմոկրատների վրա, մենշևիկները բողոքում եյին: Այժմ ամբողջ աշխարհը տեսնում է, վոր Ռուսի գրավումը շարունակվում է միայն շնորհիվ երբիոյի, Մակդոնալդի, Բլյումի, Վանդերվելդի, Երեւտի, Վիսլի միջև կայացած գործարքի: Մեր աչքի առջև Յերկրորդ Խնտերնացիոնալը դարձավ Ռուսի գրավման Խնտերնացիոնալ:

Պահպանողականները, ֆաշիստները, արմատականներն ու մենշևիկները գնում են ու գալիս, իսկ միլիտարիզմը մնում է: Նա վերականգնում և կրկնապատկում է իր պաշարները, կատարելագործում զենքերը, նոր նախագծեր կազմում, նա սպասում է, մինչև վոր ժողովրդի հիշողությունից ջնջվի վերջին պատերազմի ծանր հիշողությունները, մինչև վոր սոցիալ-դեմոկրատները հաջողեն նորից հաշտեցնել բանվորական մասսաներին բուրժուական կառավարության անընկճելիության մտքի հետ: Այն ժամանակ նա նորից ազատ կերպով դուրս կը գա համաշխարհային կողոպուտի և հափշտակության ճամբի վրա: Այն ժամանակ կը հասնի իմպերիալիստական նոր պատերազմի ժամը:

III

Նոր պատերազմի պատճառներն ու առիթները յերկաթյա անհրաժեշտությամբ բղխում են վերջին պատերազմից և Վերսալի հաշտությունից:

Ֆրանսիայի իշխող դասերն որ ավուր ավելի ուժեղ կերպով են զգում, վոր Յեվրոպայում ստեղծված տերորի և սարսափների բեժիմը յերկար տևել է չի կարող: Ֆրանսիական բուրժուան, արմատականն ու հետադիմականը միատեսակ կերպով վախենում են գերմանական վրեժխնդրությունից, հատուցումից և միաժամանակ կոչ են անում ու նախապատրաստում այդ հատուցումը: Գերմանական բուրժուան իր կողմից, ի հաշիվ ժողովրդի, համաձայնության գալով, անհամբեր սպասում է, թե յերբ պետք է հասնի հատուցման ժամը:

Անգլիայի ու Ֆրանսիայի յեվրոպական և գաղութային հակամարտությունն որ ավուր ավելի սուր կերպարանք է ստանում: Դիվանագիտական գործարքները և համաձայնություններն սքողում են այդ հակամարտությունը, բայց չեն թուլացնում այն: Յերկու դաշնակիցների ռազմական նախագծերն, առանձնապես քիմիական և ոդային ուժերի նախագծերը կազմվում են ապագա

անգլո-ֆրանսիական պատերազմը հաշվի առնելով: Այն ժամանակ, յերբ երբիոն և Մակդոնալդն աղավաղեցին գուրգուրում են իրար: Փարիզի գլխավոր շտաբը մշակում է Լոնդոնի վրա կատարվելիք ապագա թռիչքների նախագիծը, իսկ բրիտանական շտաբը զբաղված է նույնպիսի փոխայցելության խնդրով:

Յերոպայի յեկրորդական պետություններն ուժի տեսակետից հետ են մնում առաջնակարգ պետություններից, բայց ազահության, չարակամության հարցում՝ բոլորովին հետ չեն մնում նրանցից:

Մինչև պատերազմը գոյություն ունեցող փոքր պետություններն այժմ կորցրել են իրենց ինքնուրույնության վերջին մնացորդներն անգամ, իսկ պատերազմի ստեղծած նոր պետությունները ծնվել են կախվածության գունդը վտարելիս: Միջին և փոքր պետությունները՝ մեծ պետությունների ցուցմունքների համաձայն՝ այս կամ այն խմբավորումն են կազմում:

Յերոպական մայր ցամաքի կենտրոնում գտնվող պետությունները ձգտում են դեպի Ֆրանսիա ճիշտ ախպես, ինչպես առաջնակիր կախնավորը ձգտում է դեպի բանտապահը: Յերոպական ծովեզերյա մանր պետություններն իրենց մեջքը ծռել են Անգլիայի առաջ: Այնպես վոր՝ այդ յերկու մտրակավորների մեջ ընտրություն անելը մնացել է վնջ թե՛ մանր պետությունների ազատ կամքին, այլ փոքր ազգերի ընդհանուր դասավարությանը:

Վերջին պատերազմի ժամանակ չեղոքության փխրունությունն ու անդիմացկանությունը բավականաչափ ապացուցված է արդեն: Կասկած չկա, վոր նոր պատերազմն իր սկզբնավորության հենց առաջի որերից փոքր ազգերի մեծ մասին քաշելու յ պատերազմի արյունալի հորձանուտների մեջ: Փոքր Անտանտի, Բալկանյան կամ Բալտիկ ծովի մանր պետություններն միլիտարիզմը մեծ պետությունների համար ոժանդակող միջոց է և միաժամանակ փոքր պետությունների միջև՝ ինքնուրույն վտանգի աղբուր:

Համաշխարհային ամենահզոր հակամարտությունը դանդաղ, բայց համառ կերպով շոշափում է այն գիծը, վորտեղ Մեծ Բրիտանական կայսրության և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Պետությունների շահերն ընդհարվում են իրար: Վերջին յերկու տարիների ընթացքում կարող եր թվալ, թե այդ յերկու հսկաներն ամրակուռ համաձայնության են յեկել:

Բայց այդ թվացող անխախտությունը կըտևի այնքան, վորքան Հյուսիսային Ամերիկայի հանրապետության տնտեսական

վերելքը կղարգանա ու կը տարածվի գլխավորապես ի հաշիվ ներքին շուկայի: Այժմ պարզապես հասնում ե այդ յերևույթի վախճանը:

Յեվրոպայի քայքայումից առաջ յեկած ագրարային ճգնաժամը վերահաս արդյունա-առևտրական ճգնաժամի նախակարապետն ե: Ամերիկայի արտադրական ուշտերը դեպի համաշխարհային շուկան ավելի ընդարձակ յելը պետք ե վորոհնել: Ամերիկայի Միացյալ Պետութիւնների արտաքին առևտուրը կարող ե ընդարձակվել նախ և առաջ ի հաշիվ Մեծ Բրիտանիայի առևտրի, և պատերազմական նախատորմիղն՝ ի հաշիվ Մեծ Բրիտանիայի նախատորմիղի: Անգլո-ամերիկական համաձայնութիւնները շրջանը տեղի յե տալու որ ավուր ուժեղացող պայքարին, վորն իր հերթին աշխարհում չտեսնված չափերի հասնող պատերազմական վտանգի ազդանշանն ե: Յապոնական յերկրաշարժը փոխեց ուժերի փոխհարաբերութիւնը, բայց չմեղմացրեց թշնամութիւնը: Դեղին ներգաղթի արգելքը Միացյալ Պետութիւնները՝ խաղաղ ովկիանոսյան իմպերիալիստների պայքարին ցեղական պայքարի յերանգ ե տալիս: Ամերիկայի Միացյալ Պետութիւնների և Մեծ Բրիտանիայի գոտեմարտութիւն ղեպքում յապոնական միլիտարիզմի դերն անհամեմատ ավելի ակտիվ կըլինի, քան թե եր անցյալ իմպերիալիստական պատերազմի ժամանակ:

Ամերիկայի Միացյալ պետութիւնների բուրժուազիայի անհաշիվ հարստութիւնները ներկայումս ընդհանրապես համաշխարհային դասավորման մեջ, հզորագույն պայթուցիկ նյութերն են հանդիսանում: Միացյալ Պետութիւնների ժամանակավոր մեկուսուցումը առ այն, վորպեսզի կարողանա մարսել հափշտակված հարստութիւնները, իր վախճանին ե հասնում: Հյուսիս-ամերիկայան կապիտալը պետք ե տարածվի բոլոր ուղղութիւններով: Ուղիներից մեկը դեպի հարավ ե տանում: Հարավային Ամերիկա մտնելու հետ միասին Մեքսիկայի վրա յեղած ճնշումն ավելի պետք ե ուժեղանա: Յեվրոպական կապիտալը կը վտարվի Հարավային Ամերիկայից, և վերջինս ամբողջովին Հյուսիսային Ամերիկային կենթարկվի:

Միացյալ Պետութիւնների միլիտարիզմը վնչ միայն ծովի վրա, այլ և ամերիկական մայր ցամաքի վրա, ավելի ակտիվ և հարձակողական բնույթ ունի:

Վերջին տասնամյակի ընթացքում Արևելքում տեղի ունեցող հեղափոխական շարժման զարգացումն իմպերիալիստական պետու-

թիւնների գաղութային տիրապետութիւնն ավելի բացահայտ պատերազմական ճնշման բնույթ ե տալիս:

Հնդկաստանի ստրկացրած մասսաների սահմանադրական պատրանքները, համաձայնութիւն հուլսերն ի դերն են անցնում: Ազգային առաջադիմական կուսակցութիւնները և մանր բուրժուական անընդունելի չիք են դառնում: Հեղափոխական շարժումն ավելի յե խորանում և ավելի լայն մասսաներ ընդգրկում: Անհրաժեշտ ե մի ամրակուռ, կենտրոնացած և հեղափոխական կուսակցութիւն, վոր կարողանա բրիտանական իմպերիալիզմին մահացու հարված հասցնել:

Մասերի բզկտված Չինաստանում իմպերիալիստական պետութիւնները մի բեժիմ են մտցրել: Տեղական վարձկան զորքի միջոցով՝ դիմակավորված պատերազմական գրավման են յենթարկում յերկիրը: Չինական ժողովրդի անկախութիւն և միութիւն ձեռք բերելու ձգտումն ամեն մի քայլափոխին հանդիպում ե ամերիկական, յապոնական ու յևրոպական զիշատիչների ընդդիմադրութիւնը: Մակդոնաղդի Պեկինի պատվիրարին աշխատում ե պատժել չինական այն զինվորին, վոր հանդգնել ե մաքուր ողծծելու համար՝ գնալ քաղաքի այն մասը, վորտեղ զբոսնելու իրավունք ունին միայն սպիտակամորթ շահագործողները:

Չինաստանի բազմամիլիոն մասսայի սրտերը լի են որինա-կան ատելութեամբ և հարութեամբ: Այստեղ ել Հնդկաստանի պես ծանր փորձութիւններով, ընդդիմադրութիւն փորձերով ծնունդ ե առնում մի հեղափոխական շարժում, վորը Չինաստանին ազատելու յե ոտարեկրյա և սեփական բռնապետներից: Ֆրանսիան, վորն ընդարձակել ե իր գաղութների սահմանները, համառ փորձեր ե անում ընդարձակել նաև իր միլիտարիզմի աղբյուրներն, իր կապիտալի բանակի մեջ քաշելով վոչ միայն արաբներին, այլ և հույներին: Ռազմականորեն մարզված գունավոր մասսան միայն ապագա պատերազմների համար՝ լոկ իրրե կահնոտ չպետք ե ծառայի, վնչ, սեվ և դեղին գնդերը, բուրժուազիայի ձեռքին, մի հուսալի զենք են Յեվրոպայում պրոլետարական հեղափոխութիւնը ջնջելու համար: Միլիտարիզմի դիրքն ընդլայնվում ե այնպես, ինչպես ընդլայնվում ե հեղափոխութիւնի բազան:

IV

Պատերազմն այսոր ել ե ճախրում մարդկութիւն գլխին, բայց բողբոջված գրութեամբ: Ի՞նչ ե դերմանական պարտա-

հատուկությունների հարցի նոր վորոշումը, «եքսպերտների նախագիծը», յեթե վոչ տնտեսական հիմնական հարցերը վորոշելու ժամանակ պատերազմական ուղղման մեթոդների գործադրությունը: Ամերիկան, վորի գրպանները լիքն են յեվրոպական վոսկեներով, հենված Ֆրանսիայի պատերազմական ոյժին, կարգադրում է Գերմանիային, իբրև պատիժ, ստորագրել տնտեսական մի ուժիմ առ այն, վոր հանդուրժից իր պարտությունը: Միայն իսկական ստահակները կարող են ասել, վոր իբր թե եքսպերտների վորոշումը հարցի խաղաղ դեմոկրատական լուծումն է: Ըստ ելուծյան Անտանտան Գերմանիայի ճակատին դրել է ատրճանակը և թելագրում է իր վորոշումը: Մեզ—կրկնում են, վոր իբր թե յեվրոպական տնտեսություն վերականգնումը հնարավոր է միայն կապիտալիստական ուժերի ազատ խաղի միջոցով, այդ կերպ ուղում են դատապարտել տնտեսության սոցիալիստական կազմակերպման գաղափարը: Իսկ իրականության մեջ յեվրոպական տնտեսության հիմնական հարցը վորոշվում է Գերմանիայի վերաբերմամբ կիրառվող պատերազմական անընդհատ ճնշումով: այն Գերմանիայի, վորը մոտ ժամանակներս Յեվրոպայի ղեկավար կապիտալիստական յերկիրն էր: Գերմանական բուրժուազիան համաձայնում է այդ գործարքին, վորովհետև հաշվի յե առնում, թե ոտար կապիտալի ոգնությունը, պետք յեղած դեպքում և ոտար զինված ուժով, կը կարողանա սանձահարել գերմանական պրոլետարիատին: Գերմանական բուրժուազիան աստիճանաբար իր ճերանների մեջ է առնում գերմանական պրոլետարիատին, խլում նրանից հեղափոխության նվաճումների վերջին մնացորդները, յերկարացնում բանվորական ուրը, ուժեղացնում աշխատանքի լարվածությունը և այդպիսով ուղում է ստիպել գերմանական բանվորին՝ նոր տեխնիքայի և արդյունադործության կենտրոնացման միջոցով կրկին անցնել նախնական կուտակման բոլոր ճնշումների, զրկանքների ու աղետների ճանապարհը: Գերմանական պրոլետարիատի նվաստացումն և ուժաթափումը յեվրոպական բուրժուազիայի ձեռքին մի միջոց է՝ մյուս յերկրների բանվորական դասակարգին գերմանական մրցման յերկուղի մեջ պահելու: Վերջապես ամերիկական կապիտալը պատրաստվում է իր եքսպերտների ոգնությունը «հսկել» Յեվրոպայի վրա, այսինքն կառավարել Յեվրոպան ճիշտ այնպես, ինչպես ամերիկական առանձին մագնատները, ավագանիները հսկում են տասնյակ տրեստներ և յերկաթուղիներ: Միաժամանակ նա մտածում է

յեվրոպական արդյունքի, վաստակի ոգնությունը կերակրել ամերիկական բանվոր դասակարգի բարձր խավերին (վերտուղաներին), նրա ազնվականությունը, վորին ղեկավարում է դավաճաններից ամենադեղինը—Գոմպերսը և անխնա ճնշում տասնյակ միլիոն պրոլետարների, սպառնալով թե քայքայվող Յեվրոպայից դաղթականություն մի նոր հոսանք կը դիմի Ամերիկա:

Յեվրոպական աշխատավոր մասսաներին անպոստապան կան կապիտալի միջոցով և Ֆրանսիական միլիտարիզմի ուժով ստրկացնելու այդ հրեշավոր նախագիծն ընդունվել և հավանություն է գտել Յեվրոպոյ ինտերնացիոնալի կուտակցությունների կողմից: Այդպիսով Անտանտի սոցիալիստները կեղծ յերեսպաշտություն քող են ստանձնում՝ ծածկելու իրենց յերկրի բուրժուազիայի հափշտակիչ քաղաքականությունը, այն բուրժուազիայի, վորի հետ նրանք գնում են հաշտ ու համերաշխ:

Գերմանական սոցիալ-դեմոկրատիան կարծում է, թե կապիտալիստական ամուր իրավակարգի վերականգնումով կարող է հաղթահարել կոմունիստական վտանգը: Միաժամանակ նա մասսաներին բացատրում է, թե գերմանական բուրժուազիայի հետ իր ունեցած գործակցությունն անհրաժեշտ է՝ արտաքին ճնշումը վանելու համար:

Կոմունիստական դավերի և միջազգային Չեկայի մասին բարձրացրած վայնասունի ժամանակ մեր աչքի առաջ բացվում է Յեվրոպայի և ամբողջ աշխատավորների դեմ կապիտալի նյութած ահռելի դավը: Դավադրություն կազմակերպողը Ֆինանսական կապիտալն է, վորի գլխավոր շտաբը գտնվում է Նյու-Յորքում, իսկ բաժանմունքը Լոնդոնում: Կատարողական գլխավոր աշխատանքները դրված են Ֆրանսիական բորսայի ժարշալների վրա: Դավի մեկնաբանողները, պաշտպաններն ու մանր փաստաբանները սոցիալ-դեմոկրատները և Ամստերդամի պրոֆմիությունականներն են: Կապիտալի եքսպերտներին ոգնության են գալիս դավաճանության եքսպերտները:

V

Նորից հարց տանք. մինչև որս ինչն էր խանգարում բանվորին և գյուղացուն միահամուռ կերպով դուրս գալ իրենց կործանող միլիտարիզմի դեմ:—Միջազգային սոցիալ-դեմոկրատիան, մենշևիկները, Յեվրոպոյ ինտերնացիոնալը և Ամստերդամի ար-

հետ. միությունների միաբանության բյուրոկրատիան: Այս և, անցած տասնամյակի հիմնական յեղրակացությունը:

Այդ մասին մենք՝ Կոմունիստական Ինտերնացիոնալի մեջ կազմակերպված բանվորներս՝ բացարձակ կերպով հայտնում ենք ամբողջ աշխարհին:

Մենք ուզում ենք, վոր բոլոր յերկրների աշխատավորները լսեն մեզ: Մենք ուզում ենք, վոր մեր ձայնը հասնի բազմաթիվ և գյուղի ամեն մի աշխատավորի, ամեն մի աշխատավորուհու: Մենք ուզում ենք հալածվածների և կեղեքվածների սրտի մեջ հեղափոխական հուզում առաջ բերել. — ապացիք, բուրժուազիան նոր պատերազմ և պատրաստում, իսկ սոցիալ-դեմոկրատիան մթափում և ձեր միտքը, վորպեսզի ավելի հեշտությամբ կարողանա մատնել ձեզ:

Բանվորներ և բանվորուհիներ, ուշադիր կերպով լսեցեք, դիտեցեք և մտածեցեք: Մի քանի շաբաթ սրանից առաջ Ամստերդամի Ինտերնացիոնալի պրոֆմիության առաջնորդները Յերկրորդ Ինտերնացիոնալի պարագլուխների հետ միասին Վիեննայում իրար հետ քննում էին պատերազմի վտանգի հարցը: Այն կազմակերպությունը, վորի գլուխ կանգնած են՝ Վիլյամսները, Ժուռները, Գրասսմանները, Մակդոնալդները, Եբերտները և Վանդերվելդները, ստիպված եր գրադվել պատերազմի հարցով միայն նրա համար, վոր պատերազմի վտանգը նորից ձախրում և ուղում: Յեվ ահա մենք լսում ենք, թե ինչպես այդ պարոնները պերճախոս կերպով խոստանում են ամեն միջոց գործ դնել՝ պատերազմի դեմ պայքարելու համար, կանգ չառնել նույնիսկ ընդհանուր գործադուլի առաջ: Միթե դուք կը հավատաք այդ անարգ կատակերգությանը, վորի մեջ նույն դերասանները ձեր առաջ յերկրորդ անգամ խաղալու յեն մատնիչի միևնույն դերը: Չէ՞ վոր 1912 թվին Բաղելի միջազգային համագումարի ժամանակ նրանք ել ավելի հանդիսավոր կերպով խոստանում էին պատերազմը կանխելու համար՝ կանգ չառնել վոչ մի միջոցի առաջ, վորպեսզի հետո զանազան պատերազմող բուրժուազիայի ամենայնոսանդուն, ամենահուսալի ոգնականները: Պատերազմից հետո յել նրանք ծառայում էին կապիտալին իբրև միևնույնները կամ հավատարիմ պատվիրակներ և կամ իբրև արհմիությունների պատրիտ պարագլուխներ: Նրանք զսպում էին և զսպում են բանվորին՝ անգամ տնտեսական ընդհարումներից: Նրանք ձայն են տալիս պատերազմական բուժեյին և խոստանում կովել ընդդեմ պատերազմի:

մի: Արդյոք կարելի՞ յե հավատալ թե իր բուրժուազիայի հանձնարարությամբ՝ բանվորական մասսաների փողերով պատերազմական նավեր, սավառակներ և տանկաներ պատրաստող Մակդոնալդն, այն ժամանակ, յերբ բուրժուազիան կը վորոշի գործածության մեջ դնել Մակդոնալդի պատրաստած պատերազմական նավերը, սավառակները և տանկաները, կոչ կանի բանվորներին ծառանալ բուրժուազիայի վորոշման դեմ: Կարելի՞ յե արդյոք հավատալ, թե այն Վանդերվելդը, վորը ոգնում եր իր թագավորին՝ շարունակելու պատերազմը, վորը Վերսալի պայմանագրի տակ դրել և իր ստորագրությունը, կոչ կանի բելգիական բանվորներին այն ժամանակ, յերբ բելգիական բուրժուազիան անհրաժեշտ կը գտնի՝ Վերսալի նվաճումների պաշտպանության համար՝ մասնակցել պատերազմին: Կարելի՞ յե արդյոք հավատալ, թե Ֆրանսիական սինդիկալիզմի և սոցիալիզմի առաջնորդները Բլյուհն ու Ժուռն, վորոնք այսօր աջակցում են Ռուրի գրավմանը, վաղը յերբ Ֆրանսիական բուրժուազիան Ռուրի գրավումն ամբողջովի համար՝ զենքի դիմի՝ կոչ կանեն բանվորներին դեմ գնալ այդ վորոշմանը: Մարդասպանը դեռ չի հեռացել իր զոհից, դեռ նրա դանակից կաթում և արյունը, իսկ նա հանդիսավոր կերպով խոստանում և խիստ կերպով վրեժխնդիր լինել կատարված սպանության համար: Ո՞վ և այն կույրը, ռւր և այն անմիտը, վոր հավատա դրան:

Աշխատավորներ և կեղեքվածներ, ուշադիր կերպով լսեցեք, դիտեցեք և խորհեցեք: Պատերազմի տասնամյակի առթիվ սոցիալ-դեմոկրատները խաղաղության համար պայքարելու դիմակահանդես են սարքում, պատերազմական վտանգի դեմ՝ բողոքի կատակերգություն են խաղում: Նրանք ուզում են ցրել ձեր ուշադրությունը. քնացնել ձեր աչալըթությունը, վորպեսզի ավելի ձիշտ և ամուր կերպով կարողանան կապել ձեր վտանքն ու ձեռները և միլիտարիզմի ձեռքը մատնել: Միք հավատա նրանց, մերկացրեք նրանց: Ամեն մի ժողովում հարցրեք նրանց՝ յեթե ուզում են կովել ընդդեմ պատերազմի՝ ինչո՞ւ յեն ձայն տալիս հոգուտ պատերազմական բյուջեյի, ինչո՞ւ յեն քվեարկում հոգուտ բուրժուական կառավարության. ինչո՞ւ յեն աջակցում կապիտալիստական պետությանը:

Տասը տարվա փորձը դուք չպետք և անցնի: Մենք այդ ժամանակամիջոցում հետևել ենք աշխարհի բոլոր մասերի սոցիալիստական և բուրժուական պացիֆիստներին, նրանք բոլորն ել

երար արժեք: Միթե մենք չտեսնանք Ամերիկայի պացիֆիստներին, վորոնք պատերազմի առաջին տարում բարեպաշտության արցունքներ եյին թափում յեվրոպական արյունալի տնորենների առթիվ և ապա ամեն կերպ ոգնում Վիլսոնին՝ վերջնականապես արնաքամ անել Յեվրոպային:

Վորպես զի կապիտալիստական Ամերիկան հնարավորութուն ունենա ուժեղանալ և ճարպոտվել ի հաշիվ Յեվրոպայի: Միթե մենք չենք տեսել գործի անցած ֆրանսիական պացիֆիստներին, արմատականներին և սոցիալիստներին, վորոնք ֆրանսիական մասնական ոթյակներում բարոդում եյին բոլոր մարդկանց յեղբայրությունը, իսկ 1914 թվի հուլիսի 4-ին դարձան Գերմանիայի կործանման և բզկտման քարոզիչները: Չլուսանք արդյոք կառուցու, Հիլֆերդինգի պես Գերմանական սոցիալ-պացիֆիստներին, վորոնք խաղաղության ժամանակ՝ արտասուներն աչքերին՝ պատերազմի յեն սպասում, պատերազմի ժամանակ լի հույսերով խաղաղության սպասում: Այդ վորոքմեկի վախկոտները բռնել եյին նույնիսկ Վեյստի փեշերից, ինչպես այժմ կառչել են Գերմանիայի թիկունքին իր պացիֆիստության վարժություններն անող Մակդոնալդի իմպերիալիստական հուշագրերի մեղրահոս ձեւերին: Ֆրանսիական բուրժուական պացիֆիստ երրորդի հետ միասին Մակդոնալդը Գերմանիայի զինաթափման վրա վերականգնում է Անտանտի հսկողությունն այն ժամանակ, յերբ ինքը շարունակում է ալեկացնել Մեծ Բրիտանիայի սպառազինումը: Պացիֆիստները խաղաղության կողմնակիցներ են խաղաղության ժամանակ: Պատերազմի ժամանակ նրանք, առանց վորեւի ընդդիմախոսության, միանում են իրենց կառավարություններին: Միջազգային մաշտաբով, նրանք իրանց փորի վրա սողում են հզորների առաջ և նրանց ոգնում՝ ճզմելու թուշերին: Սոցիալիստական պացիֆիստներն այս տասնամյա պատերազմով և հեղափոխական ցնցումներով վերջի վերջո այլասերվել են: Նրանց նախկին անմեղությունից հետք անգամ չի մնացել: Այժմ՝ այդ սնանկ բանիմաց գործիչներն անքակտելի կերպով կապված են ամեն մի յերկրի կառավարող ֆինանսական և պատերազմական կլիկի հետ և գյուրահավատներին խաբելու համար՝ զիտակցաբար ոգտվում են պացիֆիստական ֆրազներով:

Ներկայումս պացիֆիստների գործողությունների գլխավոր դաշտը հեղափոխության, մասնավորապես կարմիր բանակի դեմ

պայքարելն է: Պացիֆիստները հեղափոխական ճնշման, ապստամբության և քաղաքացիական կռիւի դեմ են:

Սակայն բուրժուազիան զինված է, իսկ բանվորը զինաթափ: Բանվորների զինվելու դեմ կռվելով՝ պացիֆիստներն աջակցում են կապիտալիստական մեխտարիզմին և զրանով ապագա պատերազմներին ուղին հարթում: Հենց զրանով ել ավելի զգվելի յե դառնում մարդասիրության և կուլտուրայի վրա նրանց հենվելը: Յերբ պացիֆիստներին ապացուցում են, թե նրանք աջակցում են իրանց բուրժուազիայի միլիտարիզմին, նրանք ստոր կերպով մատնացույց են անում կարմիր բանակը: Նրանք զրանով ուզում են ասել, թե իմպերիալիզմից պաշտպանվելու համար՝ Ռուսաստանի աշխատավորների ձեռքով ստեղծված կարմիր Բանակի գոյությունն՝ արդարացում է հեղափոխությունը ճեշելու և համաշխարհային գիշակերության նպատակով ստեղծված կապիտալիստական պետությունների սպառազինումը: Պացիֆիստները լուծմ եյին, յերբ Ֆրանսիայի, Անգլիայի, Ամերիկայի Միացյալ Պետությունների և մյուս յերկրների զինված վաշտերը բռնագրավում եյին Ողեստան, Մուրմանսկը, Արխանգելսկը, Վլադիվոստոկը: Սակայն նրանք հուզվում և բորբոքվում եյին հանդեպ այն ճնշման, վորը գործադրում եր հեղափոխությունը կեղեքիչների դեմ: Պացիֆիստներն այժմ իրենց հենակետ են ընտրում այն, վոր ռազմական ինտերվենցիաններն արդեն վերջացել են, և բուրժուական պետություններն ստիպված են մեկը մյուսի հետեից անհրաժեշտորեն ձանաչել խորհրդային հանրապետությունը:

Մեծագույն հիմարությունը կըլինեք կարծել սակայն, թե բանվորների և գյուղացիների պետությունների համար պատերազմական վտանգն արդեն գոյություն չունի:

Կոմունիստական կուսակցության աճումն ամբապնդում է խորհրդային Միության Միջազգային դրությունը, սակայն մյուս կողմից անհանգստացնում, կատաղեցնում է իմպերիալիստներին: Այն բուլեյին, յերբ հեղափոխական վտանգն ավելի անմիջականորեն յերեան կը գա, իմպերիալիստական պետությունները նորից կարող են բռնել ռազմական հսկայական ինտերվենցիայի ձանապարհը: Վաղուց չե, վոր մենք տեսանք, թե փրփրած գերմանական իշխանությունը խաղաթղթի վրա գրեց Գերմանիայի և խորհրդային հանրապետության միջև գոյություն ունեցող հարաբերությունները: Դա հետագա դեպքերի նախերգանքն է: Կապիտալիստական աշխարհի և խորհրդային հանրապետության մեջ

համաձայնություններ կարող են տեղի ունենալ, բայց հաշտություն չեղբեք: Ինչպես Մակդոնալդի և Երրիոյի կառավարությունները մի ժամանակ պետք է իրենց տեղը գիշեն ավելի բացարձակ և վճռական ընկերայի, այնպես ել խորհրդային Միության և կապիտալիստական յերկրների պայմանագրերը մի ուր պետք է խզվեն նոր ինտերվենցիաներով:

Ահա թե ինչու համար են անհրաժեշտ՝ կարմիր Բանակը և կարմիր նավատորմը: Նրանք պահպանում են համաշխարհային հեղափոխության խոշորագույն հենարանը: Յեթե խորհրդային հանրապետությունն ընկներ, բուրժուազիան մի քանի տասնյակ տարի կը շահեր: Պրոլետարիատի վրա յեղած կապիտալիստական գրոհի դեմ վոչ մի պատվար չեր լինի, բայց այդ չի կարող պատահել, վորովհետև խորհրդային Միության բանվորն ու գյուղացին զինված են, կարմիր բանակը ճնշվածների և կեղեքվածների վահանն է և ապստամբների սուրը:

VI.

Այն ժամանակ, յերբ Յեվրոպայի արտադրական ուժերի զարգացումը սուր կերպով կանգ է առել, ռազմական տեխնիկան անխնայ և անդուլ շարունակում է իր գործը: Չտեսնված հեռաձիգ թնդանոթներ են ստեղծվում: Գնդացիներն և ավտոմատներն ուժը մի քանի անգամ գերազանցում է հետևակի բացած կրակին: Թունալից գազերը յերկրորդ տեղն են վանել ռումբերին, Ողապնացությունը՝ միացած քիմիայի հետ՝ հրեշային կերպով բնգլայնում է պատերազմի վոչնչացնող գործողությունների շըրջանը: Զորքի և խաղաղ բնակչի միջև յեղած տարբերությունը վերանում է: Ծովափնյա ամրությունները և կղզիներն արդեն պաշտպանման միջոց չեն կարող ծառայել: Մարդկային հսկայական հալածաբալայերը—Լոնդոնն ու Փարիզը բաց են վերելից հարձակման համար: Վերջին պատերազմի սարսափները թույլ փայլատակումներ են ապագա ամպրոպ-փոթորկի կայծակների ու շանթերի նկատմամբ: Կապիտալիստական հասարակակարգի ամբողջ տեխնիքական հզորությունը, ամբողջ սոցիալական բարբառությունը, նրա հակասությունների անելանելիությունը, իշխող դասերի իրար դեմ ունեցած կատաղությունը, և բոլորի պրոլետարիատի դեմ գազազանքը,—թունավորող և պայթուցիկ նյութերի անասանման ու անքանակ մասսայի կերպարանք են առել և սպառ-

նում են պայթել տարաբաղդ մարդկության դիմին: Նոր պատերազմը նախ և առաջ նշանակում է ֆերմերների և գյուղացիության մասսայական քայքայում, գյուղերի ամայացում, յերկար տարիններով գյուղացիական սերունդների մշակած հողերի անապատի և գերեզմանոցի վերածվելը: Յեվրոպայի համար այդ կը նշանակե կոլտուրայի փլուզումն, և կործանումն այն ազատագրական հույսերի, վորոնց համար մաքառել ու պայքարել են պրոլետարիատի մի քանի սերունդներ:

Այն, ինչ վոր մինչև այժմ մարդկային հասարակության մեջ արված է տնտեսություն, քաղաքակրթություն, դիտություն և գեղարվեստի շըջանում այդ բոլորը տեղի յեն տալիս այն հսկայական հարցի առաջ, թե ի՞նչպես, ի՞նչ միջոցներով խանգարել գալիք նոր պատերազմը և այդպիսով մարդկությանն ազատել այլասերումից և կործանումից: Այդ կարող են անել միայն աշխատավորները—հեղափոխական պրոլետարիատի ղեկավարությամբ: Վոչ մի խիստ միջոց, վոչ մի միլիտարիզմ չեն կարող մի բան անել, յեթե պրոլետարիատը միասնական ճակատով դուրս գա ընդդեմ պատերազմի: Սպանություն մեքենաներն անկենդան ու մեռած են, մինչև մարդը նրանց գործողության մեջ չդնի:

Մեքենան գործողության մեջ դնող մարդը ճնշող մեծամասնությամբ կամ բանվոր է կամ գյուղացի: Այդ դուք եք, աշխատավորներ: Ձեզանից է կախված պատերազմի բաղդը, հետևապես և ձեր սեփական բաղդը:

Միլիտարիզմի դեմ մղվող պայքարը չի կարելի հետաձգել՝ մինչև պատերազմը բռնկելու վայրկյանը, վորովհետև այն ժամանակ արդեն ուշ կը լինի: Պատերազմի դեմ պետք է մաքառել ու պայքարել—այժմ, ամեն ուր, ամեն ժամ: Այդ պայքարի առաջին պայմանն է՝ կապիտալիստական պետությունը բյուջե չտալ, հավատ չընծայել և չաջակցել: Այն պատգամավորը, վոր մտնում է բուրժուական միլիտարության մեջ, ոգնում է նրան գանձել տուրքերն ու հարկերը կամ հրապուրում է բանվորին ու գյուղացուն մտնել զինվորական ծառայության, նա մատնիչ է և դավաճան: Այդպիսիները տեղ չունեն բանվորական դասակարգի շարքերում: Արհեստ. միություններից պետք է դուրս վոնդել այն առաջնորդներին, վորոնք՝ ուղղակի կամ անուղղակի՝ ոգնում են միլիտարիզմին, արդարացնում նրան և համամիտ են նրան: Պրոլետարական կազմակերպությունները պետք է մաքրել քաղաքական շտրեյկերիսերներից:

Պետք է հիշեցնել բոլոր աշխատավոր տղամարդկանց և կանանց, թե ինչպես եր նախապատրաստված վերջին պատերազմը և թե ինչպես սոցիալ-դեմոկրատները չորս տարի շարունակ ոգնում էին իմպերիալիստական գեներալներին՝ վոչնչացնել և՛ բանվորներին և՛ գյուղացիներին։ Պետք է անդուլ կերպով դիմել քաղաքի և գյուղի յերիտասարդութանը։ Իմպերիալիստական պատերազմի ժամանակ նրանց հայրերի և յեղբայրների կրած վնասները կային տառապանքները բանվոր և գյուղացի յերիտասարդութան հոգու մեջ պետք է կատարի ատելութան փոխվեր՝ ընդդեմ պատերազմ նյութողների։ Յերիտասարդութունը պետք է կապիտալիստական բանակի մեջ մտնի՝ ներքին լիակատար պատրաստականությամբ՝ պետք յեղած բուլեյին հրացանն ուղղել վոչ թե իր եղբայր պրոլետարի, այլ դասակարգային թշնամի՝ բուրժուազիայի դեմ։ Պետք է անդուլ և անխոնջ կորպով հիմնահատակ անեն այն պատանշը, վորը կանգնած է բանվոր դասակարգի և զորքի միջև։ Զորանոցի հետ կապ պետք է պահել։ Պետք է ճշմարտության խոսքը հասնի ամեն մի զինվորի։ Գիտակից զինվորներին փոքրիկ խմբակների մեջ պետք է համախմբել։ Ամենահավատարիմ և արիասիրտ պրոլետար մարտիկներին յերկաթուղիների վրա պետք է հեղափոխական կազմակերպություններ ստեղծել։ Առանձին ուշադրություն պետք է դարձնել ռազմական նյութեր պատրաստող գործարանների վրա։ Նրանցից ամեն մեկում պետք է ունենալ ամրակուռ մարտնչող բժիշկներ, վոր կարող լինին վճռական բուլեյին իրենց հետևից տանել բանվորական ամբողջ մասսան։ Բուրժուազիան չի վախենում վոչ պացեֆիստական բարոյներից և վոչ ել սոցիալ-դեմոկրատիայի ընդհանուր գործադուլի սպառնալիքից։ Դրա փոխարեն բուրժուազիան վախից և ատելությունից դողդողում է ամեն անգամ, յերբ յերկաթուղու վրա, ռազմական գործարաններում, և առանձնապես բանակում ու նավատորմիցում գտնվող ամեն մի փոքրիկ անլիգալ խմբակի անունը լսում է։ Բուրժուազիան գիտե, վոր վոչ միայն բանվորն ու գյուղացին, այլ և զինվորները պատերազմի դեմ են, և միայն նրանց անջատ անջատ ու իրենց նկատմամբ ունեցած անվստահությունն է, վոր ստիպում է նրանց՝ հլու-հնազանդ գլխալ դեպի այդ սպանդանոցը։ Բուրժուազիան գիտե, վոր գնդում գտնվող ամեն մի փոքրիկ, բայց ամրակուռ կորիզ վճռական բուլեյին կարող է վճռական դեր խաղալ։ Ահա թե ինչու ամեն մի կապիտալիստական կառավարություն՝ պատասխարված վորեւ

դեմոկրատական ցուցանակի տակ՝ անխնա կերպով հալածում է իսկական հեղափոխական աշխատունքը, և ահա թե ինչու առնմի հեղափոխականի պարտքն է՝ այդ ուղղությամբ իր ջանքերը կրկնապատկել և տասնապատկել։ Միայն այն կուսակցությունն է իսկապես պայքարում պատերազմի դեմ, վորն ամեն ուր, ամեն վայրկյան բուրժուազիայի դեմ անհաշտ կռիվ է մղում, միայն այն կուսակցությունը, վորն աշխատավորներին համախմբում է այդ պայքարի շուրջը, սովորեցնում է ատել կապիտալի տիրապետությունը, վորը մասսաներին կոփում է այդ ատելությամբ, պայքարի համար անհրաժեշտ ուժեր և միջոցներ պատրաստում, հեղափոխութեան համար զորանոցներում կայաններ և հենակետեր ստեղծում։ Այնպիսի ղեկավարող ուժ է ամեն մի յերկրի կոմունիստական կուսակցությունը։ Այդ կուսակցությունների ռազմական ամբողջությունը կոմունիստական ինտերնացիոնալն է կազմում։ Մենք այդ ինտերնացիոնալի պատգամավորներն ենք անգամ հավաքվելով գյուղացու և բանվորի ջանքերով ազատված Մոսկվայում, մեր համաշխարհային կոնգրեսի այս մեր հիշեցումի, նախազգուշացումի և կոչի խոսքերով ձեզ ենք դիմում, ամբողջ աշխարհի աշխատավորներ։

Հաղթել կարելի չէ միայն այն ժամանակ, յերբ ուղում ես հաղթել, յերբ հավատում ես հաղթանակին։ Հաղթել կարելի չէ միայն այն կուսակցության շուրջը համախմբվելով, վորը ուղում էր և կարող է տանել մինչև վերջնական հաղթանակը։

Աշխատավորներ! Թող պատերազմի հարցը դառնա այն փորձաքարը, վորի վրա դուք կըփորձեք կուսակցությունների և առաջնորդների հավատարմությունը։ Բավական է, վորքան աշխատավորությանը խաբեցին խոսքերով, բառերով, խոստումներով և դեմագոգիայի հնչուն ստով։ Գործ պահանջեցե՛ք, ստուգեցե՛ք փատերը։ Թող կորչեն ստահակ պացեֆիստները, վորոնք խաղաղության ժամանակ խոսքով կովում են ընդդեմ պատերազմի, իսկ թնդանոթի առաջին վորոտի հետ՝ պատրիոտ ջնադայլ են դառնում։ Թող կորչին այն սոցիալիստները, վորոնք ժողովներում և լրագիրներում դատապարտում են բուրժուազիայի ճնշումը, իսկ բուրժուազիայի ծանր օրերին նրա լավագույն հենարանը դառնում։ Թող կորչին Ամստերդամի այն դեղին պրոֆմիությունականները, վորոնք իրենց ցուցմունքներն ստանում են բուրժուական միխիտրներից և կապիտալի մագնատ ավազանիներից։ Թող կորչեն բուրժուական բյուջեյին ձայն տվող գալաճանները, վորոնք ոգ-

նում են կապիտալիստական պետութիւններին պաշտպանող և գաղութային ստրակացման նպաստող բուրժուական բանակների կազմակերպմանը, վորովհետև դրանով նրանք նոր պատերազմներ են պատրաստում:

Թող կորչին քաղաքական և արհմիութիւնական կազմակերպութիւնների մենշևիկ առաջնորդները: Հեռու վանեցեք նրանց, ապացուցեցե՛ք նրանց սնանկութիւնը, բանվորական դասակարգի շարքերից վոնտեցեք այդպիսիներին: Աչալուրջ կերպով դիտեցեք, խոսքերին մի՛ք հավատա՛, համեմատեցե՛ք, ստուգեցեք, կը համոզվեք, թե միայն մի կուսակցութիւն կա, վոր պատրաստ ե առաջնորդել ձեզ դեպի կռիւ և ընդունակ ե ապահովելու ձեր հաղթանակը: Այդ՝ կոմունիստական կուսակցութիւնն ե: Նայեցեք Ռուսաստանին, այդ հետադեմ յերկրում, վորը ծավալվել ե անսահման տարածութեան վրա, Լենինի հանձարով ստեղծվեց մի հեղափոխական կուսակցութիւն, վորը վոչ միայն կարողացավ տապալել իր բուրժուազիային, այլ և կարողացավ իր աշխատավորների իրավունքը պաշտպանել բազմաթիւ թշնամիների հարձակումից: Յերկրի հետամնացութեան, կուլտուրայի ցած մակարդակի, նախորդ յերկու պատերազմների պատճառած հսկայական փլուզումի և ավերածութեան ծայրագույն դժվարութիւնների մեջ՝ բանվորն ու գյուղացին, աղյուս աղյուսի վրա դնելով, կառուցում են սոցիալիստական հասարակակարգի շէնքը:

Դուք, Յերոպայի և Ամերիկայի պրոլետարներ, այդ ճանապարհի վրա՝ անհամեմատ ավելի դործ կարող եյիք կատարել, քան Ռուսաստանի պրոլետարիատը, վորովհետև դուք թվով ավելի շատ եք, և ձեր յերկրներն ավելի հարուստ են: Վորպեսզի դուք անընկճելի ուժ դառնաք, պետք ե միայն հասկանաք ձեր ուժը և գործադրեք այն: Այդ սովորեցնում ե ձեզ միջազգային կոմունիստական կուսակցութիւնը: Հետևեցեք նրան:

Դուք յես, կեղեքված և ավերված գյուղացիներ, մտեք մեր մեծ միութեան մեջ: Անցյալ տարի ստեղծված գյուղացիական Խնտերնացիոնալն իր ուժերն ամբողջովին գործադրում ե միլիտարիզմի և նոր պատերազմի վտանգի գեմ պայքարելու համար:

Յեւրոպայի գյուղացիներ, Ամերիկայի Ֆերմերներ, ամբողջ աշխարհի ռանչպաններ, ձեր տնտեսութեան բաղդի, ձեր զավակների գլխի մասին ե հարցը:

Յեւեք, համախմբվեցեք, միացեք հեղափոխական բանվոր-

ական դասակարգին: Դուք փրկութեան ուրիշ ճանապարհ, ուրիշ յեւք չունեք:

Կանայք՝ քույրերը, ամուսինները, մայրերը տղամարդկանցին ավելի քիչ են աչքի ընկնում, բայց միլիտարիզմի և պատերազմի լուծն ավելի պակաս չի ծանրանում նրանց վրա: Չորսամյա պատերազմը քայքայելով բանվորի ընտանիքը, կործանելով գյուղացու տնտեսութիւնը, աշխատավոր կնոջը կապիտալի բեռնակիր անասունը դարձրեց: Մայրերի, ամուսինների և քույրերի սըրտում սպանդանոցը սարսափելի սպիներ թողեց: Այն բոլորից հետո, ինչ վոր կրիլ ե աշխատավոր կինն այս տարիների ընթացքում, պետք ե դրդեն նրան պատերազմի և կապիտալի դեմ մղվող պայքարի առաջի շարքերում լինել:

Բանվորներ և գյուղացիներ, դուք տեղ ունեք մեզ մոտ, մենք սպասում ենք և կոչ ենք անում ձեզ:

Գաղութային ժողովուրդների հեղափոխական լուսավորութիւնը պրոլետարիատի համար դարձել ե կյանքի և մահվան հարց: Յեթե բուրժուազիան աշխատում ե գաղութների կեղեքումով պահպանել և հավերժացնել պրոլետարիատի կեղեքումը, մենք ել մեր կողմից գաղութներին ապստամբութեան կոչն ենք անում՝ ոգնելու պրոլետարիատի ապստամբութեանը:

Ազգային և ցեղական նախապաշարունակները ստրկութեան արդունք են և անուցանում են ստրկութիւնը: Շովինիստական տրամադրութիւնները՝ լինեն նրանք քողարկված, թե բացահայտ միլիտարիզմի լավագույն հենակետներից և ապագա պատերազմները նախապատրաստելու ամենահիմնական միջոցներից մեկն են: Անողորմ կռիւ պետք ե հայտարարել ազգայնական նախապաշարունակներին և ցեղական ամբարտաւանութեանն ու գոռոզութեանը: Սպիտակների դեպի դեղիններն ու սեւերը տածած ուղղակի թշնամանքը, հեգնական վերաբերմունքը, ծաղրը, այլ և նրանց վերաբերմամբ ունեցած հովանավորող ներողամտութիւնը պետք ե աշխատավորների հասարակական կարծիքի կողմից ամենախիստ պատժի յենթարկվի, վորպես միաբանութեան զգվելի խախտումն, վորպես չարախինդ շտրեյկերիսերութիւն:

Դասակարգերի պայքարը չպետք ե մթափնվի ու խեղաթուրվի շովինիզմով: Գաղութային աշխատավորին պետք ե սովորեցնել՝ հանձնիս սպիտակ բանվորի՝ ճանաչել իր յեղբորը: Դրա համար ել սպիտակ պրոլետարիատը պետք ե սովորի յեղբայրաբար վերաբերվել գաղութների գունավոր ազգաբնակչութեանը:

Յեվրոպայի պրոլետարներ, ավելի մեծ ուշադրություն դարձրեք գաղութների հարցի վրա, ավելի շատ ուժեր նվիրեցեք գաղութային հեղափոխական աշխատանքներին: Այնտեղ, ուր բուրժուական փնտռում է իր հուսատու հենակետներից մեկը, այնտեղից մենք պետք է հասցնենք նրան մեծագույն հարվածներից մեկը:

Գաղութների աշխատավորներ, իմպերիալիզմի ստրուկներ, մեր յեղբայրներ, Զարթեցեք պայքարելու և անկախություն ձեռք բերելու համար: Կոմունիստական Ինտերնացիոնալը ձեզ հետ է:

*
* * *

Ներկայումս պատերազմի դեմ մղվող մեր պայքարի մոտակա, հերթական անհետաձգելի անելիքն է՝ կռիվ հայտարարել կապիտալիստական բռնակալների այն դավի դեմ, վոր կրում է եքսպերտների նախագիծ անմեղ անունը: Այստեղ ևս, ինչպես ամեն տեղ, առաջին հարվածը պետք է հասցնել սոցիալ-դեմոկրատիային: Սոցիալ-դեմոկրատիան բանվորներին վախեցնում է Ամերիկայի ուժով, պահանջում է, վոր բանվորները հլու լինեն և հնազանդվեն: Նա ասում է, վոր յեթե Յեվրոպան, առանձնապես Գերմանիան դուրս գան ամերիկական կապիտալի տիրապետության տակից, նրանց սպասում է լիակատար կործանում: Իսկ մենք՝ կոմունիստներս՝ ասում ենք Յեվրոպայի աշխատավորներին՝ ձեր փրկությունն եքսպերտների ծրագրի, այն գործադրողների և պաշտպանողների դեմ անհաշտ պատերազմ հայտարարելն է: Պետք է ճանապարհից հեռացնել սոցիալ-դեմոկրատներին, պետք է տապալել բուրժուաներին. պետք է իշխանությունը ձեռք առնել, պետք է միացնել յեվրոպական տնտեսությունը, և այն մղել դեպի սոցիալիստական ուղին: Յեթե խորհրդային Ռուսաստանը կարողացավ մի շարք տարիների ընթացքում պաշտպանել իրեն Յեվրոպայի և Ամերիկայի կապիտալիստներից, միաժամանակ ջանքերով յեվրոպական պրոլետարիատի հաղթանակն անկասկած կը լինի յեթե նա կարողանա իր ձեռքը ձգել իշխանությունը, յեվրոպական պետություններին համախմբել մի խորհրդային ֆեդերատիվ հանրապետության շուրջը և դարձնել Յեվրոպան բանվորա-գյուղացիական Միացյալ Պետություններ (շտատներ): Դրանով վոչ միայն յեվրոպական կուլտուրան կը փրկվի անկումից և փթումից, վոչ միայն ապահովված կը լինի գաղութային և կիսագաղու-

թային յերկրների ինքնուրույնությունն ու ազատությունը, այլ և մահացու հարված հասցված կը լինի ամերիկական կապիտալի համաշխարհային ինքնակալությունը:

Հեղափոխական շարժումն Ամերիկայում հսկայական թափ ձեռք կը բերի: Այդպիսով յեվրոպական սոցիալիստական հանրապետության անկյունաքարը: Միայն այդ ժամանակվանից մարդկությունը հնարավորություն կունենա մարդավայել կերպով մտածել և գործել, համաշխարհային տնտեսությունը հիմնված կը լինի միաբանության և բանականության վրա, համաշխարհային կապերը կը դառնան զանազան ազգերի և մայր ցամաքների նյութական և հոգեկան բարիքների յեղբայրական փոխանակում: Պատերազմները կը մնան անցյալին, վորովհետև նոր պատերազմների առիթ չի լինի:

Պատերազմների հետ միասին կը վերանան և՛ բանականները: Մարդկանց բոլոր ջանքերը կը գործադրվեն մեր մոլորակը հաբստացնելու և մարդկային կյանքը բարելավելու և զեղեցկացնելու համար:

Այս է Կոմունիստական Ինտերնացիոնալի անելիքը—հոյակապ ու հրաշագեղ—բայց իրականանալի: Նրա իրականացման ուղին ցույց են տվել Մարքսը և Լենինը: Այդ է՝ ամեն մի յերկրի ազգային բուրժուազիալի դեմ պայքարելու դաժան ուղին, այդ է՝ զանազան յերկրների պրոլետարիատի հանուն իշխանություն ձեռք բերելու և պրոլետարիատի դիկտատուրա սահմանելու պայքարների զուգակցության ուղին: Ով ասում է, թե ուրիշ ճանապարհներ կան, նա խաբում է ձեզ: Կոմունիստական Ինտերնացիոնալը ծառայում է պրոլետարիատին նրանով, վոր ասում է ճշմարտությունը: Թող այդ ճշմարտությունը, վորպես հեղափոխական պայքարի անազանգ, հնչի ամեն տեղ:

Պատերազմի դեմ, բուրժուազիայի դեմ, սոցիալ դավաճանների դեմ, հանուն համաշխարհային հեղափոխության, հանուն պրոլետարիատի դեկտատուրայի, հանուն Կոմունիզմի:

Կոմունիստական Ինտերնացիոնալի 5-րդ համաշխարհային կոնգրեսի պրեզիդիում—Զինովյեվ, Կլարա Յետկին, Ստալին, Բուխարին, Տրոցկիյ, Բրանոն, Հերզարդ, Տրեյն, Սելե, Բորդիգա, Շմերալ, Մունա, Շեկլո, Կոլարով, Կրայեվսկիյ, Կատայամա, Ռոյ, Ստուարտ, Դենն, Վայնկոպ:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՍՆԱՄՅԱԿԸ

(Դժպերիալիստական պատերազմի 10-ամյակը հավերժացնող հանձնաժողովի մշակած թեզիսները ազիտատորների համար):

1. Պատերազմի արդյունքները. նոր պատերազմների հեռանկարները

Ամբողջ մի տասնամյակ է անցել այն մոմենտից, յերբ համաշխարհային կապիտալիզմի գիշատիչները ժողովուրդներին յեղբայրասպան սպանդանոցի մեջ նետեցին: Գաղութների, սպառման շուկաների, հում նյութերով հարուստ յերկրների, կապիտալը գործադրելու շրջանների համար շարունակ իրար ներհակող իմպերիալիստական ավազակային խմբերը գործեցին մի վոճիր, վորը նախատեսել է վորի դեմ նախազգուշացրել են սոցիալիզմի թեորիտիկոսները, և վորին սարսափով սպասում եր պրոլետարիատը:

Պատերազմական պատուհանների և հետպատերազմյան հիասթափումների անցած տարիները քամուն տվին պատրանքը, պուկեցին այն կեղծ ցուցանակները, վոր ստորաքարշ իդեոլոգները փակցրել էին պատերազմի սարսափելի պատկերների վրա: Ժողովրդական մասսաներն իրենց աչքով տեսան, թե ինչ է նշանակում «վերջին պատերազմ» «պատերազմ քաղաքակրթության», համար «ժողովուրդների սրբազան իրավունքների», դեմոկրատիայի և ճնշված ժողովուրդների ազատագրության համար:

Թնդանոթների վորոտներ, հրդեհների ցուք, հեղձուցիչ գազեր, միլիոնավոր գաղթականների թշվառություն, դիակների կույտներ, — ահա կապիտալիզմի պատկերը, վորը իրենց աչքի առաջ տեսան ժողովրդական մասսաները: Կապիտալը ծառացավ բազմաչարչար մարդկության առաջ իր ամբողջ գարշելի մերկությունը: Վոսկյա լեռների փոխարեն, վոր խոստացել էին կապիտալիստ-

ները՝ բանվորներին պատերազմի հաղթական յելքից հետո, մի պատերազմի, վորը նրանք անվանում էին վերջին և արդար, — կապիտալիստներն անցան վճռական հարձակման բանվոր դասակարգի դեմ: Մի շարք յերկրներում վերացված է 8—ժամյա բանվորական ուրը, ֆաշիզմի սանձարձակությունները վոչնչացրին բանվորական կազմակերպությունները. հետպատերազմյան հարկերի, պատերազմական տուգանքների և պարտքերի ծանրությունն իր ամբողջ բեռով ընկել է բանվորական մասսաների ուսին: Բանվոր դասակարգը, վոր մինչ այդ ուզմի դաշտերում միլիոնավոր դիակներ է թողել, կարող է տրամաթյամբ գուշակել, թե յերբ կապիտալիստները նորից կը հրահրեն համաշխարհային հրդեհը: Բուրժուազիայի մեծ սուտը վերջին պատերազմի մասին, այն մասին, թե պատերազմից հետո պիտի հաղթանակեն արգարություն և մարդասիրություն սկզբունքները, հուս է ցնդում ամենահետաժամյա խավերի գիտակցության մեջ անգամ: Կապիտալիզմը շտապում է իր պրակտիկայով ապացուցել պրոլետարիատի հեղափոխական առաջնորդների առաջադրած այն մտքերի ճշտությունը, թե 14 թվականի սպանդանոցն իմպերիալիստական արյունահեղ ջարդերի շղթայի սկզբնական ողակն է հանդիսանում միայն, վորին վերջ կը դնի միմիայն միջազգային պրոլետարիատը, յերբ կը կարողանա մոբիլիզացիայի յենթարկելով բոլոր աշխատավոր մասսաները, կապիտալի դեմ վճռական քաղաքացիական կռիվ հաղթահարել իմպերիալիստական պատերազմը և վոչնչացնել պատերազմների պատճառն ու աղբյուրը — կապիտալի դասակարգային գերիշխանությունը:

Վեց տարի յե անցել այն ժամանակից, յերբ հաղթողները մեծ հանդիսով տոնեցին իրենց վայրագ հաղթանակը միլիոնավոր ընկածների վոսկրների վրա, հայտարարելով քաղաքակրթության հաղթանակ, հավիտենական խաղաղություն, միջազգային համաձայնությունների զարգացում Ազգերի Լիգայի ղեկավարության տակ: Այժմ կույրի համար ել պարզ է, վոր կապիտալիզմը չը տվեց խաղաղություն, վոր նա խաղաղություն չի տվել և չի յե կարող տալ:

Դեռ արյուն է հոսում պատերազմից ստացած վերքերից, դեռ պատերազմին մասնակցող միլիոնավոր ինվալիդների ու հաշմանդամների հիշողությունից չեն անհետացել պատերազմի կոշմարային պատկերները, իսկ կապիտալը նոր համաշխարհային պատերազմներ է պատրաստում ու բացի գրանից վորպես փորձ

մասնակի կուիքներ և ռազմական եքսպեդիցիաներ և սարքում: Վերսալի հաշտությունից ի վեր թնդանոթներն առանց աշխատանքի չեն մտնել, եքսպեդիցիաները դադարեցվել են յերկրներում «խնդրորոշում են» տեղացիներին: Կենտրոնական Յիվրոպայի խոշոր մասը զինված մի բանակ է՝ բելգիական, ֆրանսիական, անգլիական ու փոփոխվող գունավոր զորքերով, վորոնք զբաղված են ի սպաս կապիտալիստական կարգերի: Ժողովրդական մասսաների թշվառություն, տնտեսական հարաբերությունների կազմալուծություն, վորը անբուժելի յե հակառակ կապիտալիզմի հեքիմների ամեն տեսակ խորամանկությունների, զինվորական սանձարձակությունների, պատերազմների ֆաշիզմի թարախոտ խոց, մեծ և փոքր կապիտալիստական պետությունների սրված ախորժակներ, վոր ղեկավարվում են կուլիսների յետևից ֆինանսիստ տուղերի, ծանր ինդուստրիայի կոմիտեների, բանկերի և բորսաների կողմից, սպառազինումների յետևից աժիոտաժ, վոր ծածկում են սպառազինումների սահմանափակման մասին յեղած բարեպաշտ մոտիվներով, մարդկանց վոչնչացման և կոտորածի նորանոր միջոցների հետապնդում,—անա թե ինչ տվեց կապիտալիզմը պատերազմից հետո, պատերազմից վորին կապիտալի գործակատարներին մեկը, մեկը համաշխարհային սպանդանոց կազմակերպողներից, Ֆրանսիայի նախկին պրեզիդենտ—Միլերանն անվանեց «պատերազմներից ամենից փառավորը»:

Ռուսի ռուսացիան, պատերազմական անխուսափելի նոր բաղնիքները, վորոնց չի կարող, անգոր և, չիցանկանա կասեցնել վոչ մի պարլամենտական կամ պարլամենտից դուրս կատարվող բուրժուական կուսակցությունների և նրանց սոցիալիստական պնակալիների կոմբինացիա—վերջնականապես թաղում և այն բոլոր հույսերը, թե հնարավոր և հաջող կերպով վերականգնել համաշխարհային տնտեսական որդանիքը:

Անտանտի յերկու մեծ պետությունները, «պրուսական միլիտարիզմի ճանկերից քաղաքակրթությունը փրկելու ընդհանուր մեծ գործի կովի համար ի մի ձուլված» Ֆրանսիան ու Մեծ Բրիտանիան պատրաստվում են միմյանց ոճիքից բռնելու:

Նրանց շահերի հակադրություններն ամեն որ աճում և յեքելման են գալիս ամեն տեղ՝ Միջին Յիվրոպայում, Փոքր Ասիայում ու Բալկաններում, Հյուսիսային Ամերիկայում ու Արևելյան Ասիայում: Մեծ Բրիտանիան սարսափելի անհանգստություն է արթնացնում և Ֆրանսիական ցամաքային զորաբանակների և ողային

տորմիդների աճմանն ու նրա կապված զինվորական համաձայնություններին: Ծովային զրահակիրներ և մանավանդ ողային տորմիդներ պատրաստելու ասպարիզում բացարձակ մրցում և կատարվում: Ծիշտ ալդաես ել անհողողող զարգանում են իմպերիալիստական կոնֆլիկտների ելեմենտներն Սմերիկայի ու Յապոնիայի մեջ:

Հազարավոր հնարագետներ աշխատում են մարդկությունը վոչնչացնելու համար դժոխային հնարքներ գտնել, կառավարություններն աշխատում են միմյանց զինվորական գաղտնիքներն իմանալու և միմյանց գերազանցելու հնարագիտությունների մեջ: Անգլիական միլիտարը պալատում բացարձակ կերպով հայտարարում և այն բանի կարևորությունը, թե «հայրենիքը պաշտպանելու համար հարկավոր և ստեղծել այնպիսի նավատորմի, վոր կարողանա պաշտպանել ողային ամենաուժեղ նավատորմից ունեցող պետության հարձակումից, վորի հարևանությունն այդպիսի հարձակումը հնարավոր և դարձնում»:

1914 թ. համաշխարհային պատերազմի բռնկման նախորդակին յերկրագնդի բոլոր յերկրներում զենքի տակ յեղել են 7 միլիոն մարդ, 1921 թ. Վերսալի հաշտությունից և հաղթված յերկրների զինաթափությունից հետո, խաղաղ ժամանակվա շտատների բոլոր բանակների ընդհանուր թիվը հասել է 11 միլիոնի, այսինքն մոտավորապես յերկու անգամ ավելացել է: Միացյալ Պետությունները 1914 թ. զինվորական նպատակներով ծախսել են 49 միլ. ֆունտ ստերլինգ, իսկ 1920 թ. 501 միլ. ֆ. ստ: Անգլիայի զինվորական ծախսերը 1914 մինչև 1920 թ. աճել են 3 անգամից ել ավել: Ֆրանսիան մի զորաբանակ և պահում, վոր գերազանցում է գերմանական մինչպատերազմական զորաբանակին, թեև Ֆրանսիայի բնակչությունը մի յերրորդով պակաս է Գերմանիայի բնակչության թվից: Լեհաստանում վորը Ս. Ս. Հ. Մ. ղեմ զինվում է ֆրանսիական փողերով, յուրաքանչյուր 100 բնակչին մի զինվոր և ընկնում: Այդպիսի հարաբերությունն չի յեղել նույնիսկ տիրահաճակ միլիտարիստական Պրուսիայում, վորի ղեմ ղեմակրատական Անտանտան 1914-18 թ. թ. վարում էր «վերջին արդար» պատերազմը:

Սակայն ել ավելի քան զորաբանակների թիվն աճել է և ամեն որ շարունակում է աճել այն ավերիչ միջոցների ուժն ու գործությունը, վոր նրանք կը գործադրեն միմյանց դեմ, անխուս

սափեկիորեն մոտեցող նոր պատերազմն սկսվելու հենց յերկրորդ օրը:

Այդ գալիք պատերազմի համար տարվող պատրաստությունները կը շարունակվեն անկախ այն բանից, թե բուրժուական վոր խմբակն է կառավարության գլուխ կանգնած, կամ թե «բանվորական» ինչ շիրմայով են քողարկվում բուրժուական պետության իսկական շարժառիթները, Մակդոնալդի կառավարությունը նույնպես պատրաստում է զրահակիր նավեր և ողային նավատորմիդ, ինչպես այդ արել են Կերզոնի, Բալգվիլի Լոյդ-Ջորջի և մյուսների կառավարությունները: Ձախ բլոկի կառավարությունն, ազգային բլոկի, Միլերանի ու Պուանկարեյի կառավարություններից վատ չի ծառայի իմպերիալիստական պատերազմի աստծուն:

Զինաթափության հնարավորություն, սպառազինումը սահմանափակելու, կոնֆլիկտները մեղմացնելու նպատակով միջազգային տրիբունալ կազմելու մասին յեղած պացիֆիստական հեքյաթները միայն բողբոջում են պատերազմի ուժեղ պատրաստությունները: Այն պետությունները, վորոնք ծովային ուժեղ նավատորմիդներ ունեն, հեռու չեն հոգալու, վոր ցամաքային զորքանակները կրճատվեն, իսկ այն պետությունները, վորոնք մի քանի տարվա մեջ պատերազմի համար արդեն պատրաստել են ահագին քանակությամբ հրանյութեր, աշխատում են, վոր մյուս պետությունները կրճատեն խեղդիչ գազերի համար գործադրվող թունավոր նյութերի արտադրությունը, վորպեսզի այդ ասպարիզում մյուս պետությունները չկարողանան իրենց հասնել:

Ազգերի Լիգան, վորի ծնունդը հայտարարվեց վորպես նոր, խաղաղ դարեշրջանի սկիզբ, վոչ այլ ինչ է, քան իմպերիալիստական պետությունների ձեռքի խաղալիքը կամ նրանց գաղտնի պայքարի ասպարեզ: Կոմմունիստական Իստերնացիոնալն անդադար մերկացրել է Ազգերի Լիգայի իսկական ելուցիկը, մերկացել է բուրժուազիայի յեվ սոցիալիստ պատրիոտների ագենտների խաբեյությունները, յեվ հիմա բոլորի համար ել պարզ պիտի լինի այդ բուրժուական խաբեյության բովանդակությունը:

Բուրժուական պացիֆիստական ճառերի կեղծ լինելու ավելի քան բացահայտ արտահայտությունն ու ապացույցը յեվ բուրժուական շրջանների «խաղաղ» քաղաքականության անանկությունը Ռուրի ոկուպացիան է:

Դեպքերի տրամաբանությունը ընպարացիոն քաղաքականությունն ուղղում է դեպի իմպերիալիստական կոնֆլիկտների հունը: Անխուսափելիորեն աճում, զարգանում են շահերի հակասությունները, համաշխարհային կապիտալիզմի զարգացման կենտրոնախույս ուժերը (Ամերիկան, Յապոնիան, Անգլիան ու գաղութներն իրենց աճող յերիասարդ կապիտալիզմով, անգլիական ու ամերիկական կապիտալիզմն յեվ այլն):

Տասնյակ միլիոնավոր սպանվածներ, վիրավորներ ու հաշմանդամներ, անտեսական բարիքների ահագին չափով վոչնչացում, վայրենացում, աղքատություն, այլասերում,—յեվ այս բոլորը նրա համար, վոր նորից սև նորից կանգնեք ել ավելի սարսափելի նորանոր պատերազմների ավերիչ ուժի անխուսափելիության առաջ.—այսպես է իմպերիալիզմի տրամաբանությունը:

II. Պատերազմի հանցավորները. II ինտերնացիոնալը—իմպերիալիստական պատերազմի վոճրագործ միղսակից.

Պատերազմը վերջանալուց հետո, Վերսալի թալանիչ հաշտությունը կնքելու ժամանակ բուրժուական շայկաները ժողովրդական մասսաների ցասումն ու կատաղությունն իրենցից հեռացնելու համար յերեսալաշտությամբ զբաղվում եյին պատերազմ առաջացնելու հանցավորներին փնտելով, վորոնց վրա կարելի լիներ բարձել համաշխարհային հրդեհի պատասխանատվությունը: Գերմանական Վեյմարի կայսրին հանցավոր հայտարարելը բանվորների ու գյուղացիների առաջադեմ խավերի գիտակցությունից չեր կարող դուրս մղել այն հաստատ համոզմունքը, վոր կապիտալիստական բոլոր վոհմակները, բոլոր ազգերի բորսայի տուղերը, ամեն հավատի բանկիրները, ֆինանսական կապիտալի յեվ ծանր ինդուստրիայի ղեկավարները—ինչպես մի կողմից Գերմանիայում, այնպես ել մյուս կողմից Ֆրանսիայում ու Անգլիայում, հավասար չափով մեղավոր են համաշխարհային պատերազմն առաջացնելու մեջ: Համաշխարհային կապիտալիզմն ու իմպերիալիզմը միացած տոհմական ագնիականության մնացորդների, գիշաստիաների, հոգեվորականների հետ—ահա պատերազմ—սպանդանոցի իսկական հանցավորները: Բանվորական մասսաներն ու պատմությունը չեն մոռանա, վոր թե պատերազմի փորձությունների վճռական ժամին, թե պատերազմի ամբողջ ընթացքում և թե պատերազմից հետո յեղած շրջանում կապիտալը, համաշխարհային

պատերազմի գործերում, ի դեմս II-րդ Ինտերնացիոնալի գտել եր իր համար կամավոր աջակից յեւ ոգնական, վոր վոճրագործի պես դավաճանեց բանվոր դասակարգի, աշխատավորութեան, ամբողջ մարդկութեան շահերին:

Համաշխարհային պատերազմից շատ առաջ միջազգային սոցիալիզմը նախատեսել է այդ պատերազմի անխուսափելիութիւնը, ցույց ե տվել նրա պատճառներն ու գործոնները, գծել ե նրա դեմ պայքարելու ճանապարհները:

Մասնակի պատերազմները՝ Ռուս-Յապոնական, Բալկանյան, Իտալո-Տաճկական, տարեց տարի հաստատեցին միջազգային սոցիալիզմի յերկյուղը:

Միջազգային սոցիալիզմը շատ առաջ քան 14 թվականի իմպերիալիստական պատերազմը, ղեկավար սկզբունքներ եր վորոշել սոցիալիստական կուսակցութիւնների բռնելիք ընթացքի մասին իմպերիալիստների կողմից պատերազմ պատրաստելու վերաբերմամբ ե իր միջազգային համագումարներում (մանավանդ 1907 թ. Շտուտգարդում, 1912 թ. Բազելում) ու մի շարք ազգային համագումարներում (գերմանական ս. դ. Նիմնիցկիի պարտեյտագը, ե այլն) մատնանշել ե սոցիալիստական ե բանվորական կազմակերպութիւնների գործելակերպը պատերազմի բռնկման դեպքում:

II Ինտերնացիոնալը պատերազմին վերաբերվող վորոշումն ընդունելով, իր վրա վորոշ պարտականութիւններ ե վերցրել:

Շտուտգարտի համագումարի վորոշումն ասում ե. «...Համագումարը բոլոր բանվորների յեւ նրանց պարլամենտական ներկայացուցիչների պարտականութիւնն ե համարում բոլոր միջոցներով պայքարելու զինման դեմ ինչպես ցամաքի, այնպես ել ծովի վրա, մերկացնելու բուրժուական հասարակութեան դասակարգային բնույթը յեւ այն դրդապատճառները, վորոնցով նրանք ղեկավարվում են ազգային ներհակութիւնը պահպանելու ժամանակ, ինչպես յեւ այդպիսի քաղաքականութեան դեպքում մերժել ամեն տեսակ զրամական աջակցութիւն յեւ աշխատել, վորպեսզի պրոլետարական յերիտասարդութիւնը կրթվի ազգերի յեղբայրութեան սոցիալիստական գաղափարներով, աշխատելով վոր նրա մեջ շարունակ պահպանվի դասակարգային ինքնազիտակցութիւնը:»

Շտուտգարտի համագումարի վորոշումը հավանութիւն ե տալիս ուս եւ յեւ բանվորների ու գյուղացիութեան գործու-

նեցութեանը, վորոնք մասսայական հեղափոխական կռիւ եյին վարում, վորպեսզի խանգարեն ցարիզմին պատերազմելու, վորպեսզի վերջ տան նրան, վորպեսզի այդ ընդհարման ժամանակ ժողովրդին ե պրոլետարիատին քաղաքացիական կռիւ կոչ անեն: «Իսկ յեթե պատերազմն արդեն սկսվել ե—այդպես ե վերջացնում համագումարը յուր վորոշումը—չնայած գործադրած բոլոր միջոցներին, այն ժամանակ սոցիալիստները պարտավոր են ամեն ջանք գործ դնելու, վոր վորքան կարելի յե շուտ դադարեցվի այդ պատերազմը յեւ ամեն կերպ ոգտագործվի պատերազմի կողմից առաջ բերված քաղաքական ու տնտեսական ճգնաժամը, վորպեսզի բարձրացվեն ժողովրդական ամենալայն մասսաները յեւ արագացվի կապիտալիստական պետութեան անկումը:

1912 հոկտեմբ. 29-ին Բալկանյան պատերազմի առթիւ միջազգային սոցիալիստական բյուրոն վորոշում ե ընդունում, վորի վերջին մասում ասվում ե՝ «Յերեվի մոտիկ ապագան սոցիալիստների կուսակցութեան ու պրոլետարիատի համար կ'ըբերի շատ վորճութիւններ յեւ նրանցից կրպահանջի պատասխանատու գործեր: Պրոլետարիատը կրկարողանա ղեկավորել այդ ղժվարութիւնները հարկավոր քաջութեամբ: Թող լավ իմանան կառավարողները, վոր կրակի հետ խաղալը վտանգավոր ե հենց իրենց համար: Յեթե նրանք ամբողջ Յեվրոպայում կրվառեն սարսափելի հրդեհ, այն ժամանակ դա նրանց համար անպատիժ չի անցնի:»

Նույն տարվա նոյեմբերին Բազելի միջազգային համագումարն արտակարգ մանիֆեստ ընդունեց թե ընդդեմ դալիք իմպերիալիստական պատերազմի յեւ թե ընդդեմ թեկուզ ամենաչնչին ոգնութեան հոգուտ այդ պատերազմի, նաեւ ընդդեմ բուրժուական կառավարութիւնների ու պարլամենտների, վոր վարում են այդ պատերազմը:

«Նա (Ինտերնացիոնալը) այն բանի կողմնակից ե, վոր բոլոր յերկրների բանվորները կապիտալիստական իմպերիալիզմին հակադրեն պրոլետարիատի ինտերնացիոնալիստական համաձայնութեան հզորութիւնը:

Համագումարն ուղղակի յեւ պարզ կերպով ցույց ե տալիս ճանապարհները, վորով պիտի ընթանան բանվորները յեթե վոճրագործութիւնը կատարվի, յեթե պատերազմն սկսվի—դա քաղաքացիական պատերազմի ճանապարհն ե: Այն հանգամանքի մատնանշումը, վոր ինչպես Ֆրանս—պրուսական այնպես ել ուսայպոնական պատերազմին պրոլետարիատը ապստամբութեամբ

պատասխանեց քաղաքացիական կռիւով—վոչ այլ ինչ է, յեթե վոչ մի կոչ ուղղված սոցիալիստական կուսակցութիւններին յեւ բան-վորական կազմակերպութիւններին, վոր այժմ եւ պատերազմին նա պատասխանի նույն քաղաքացիական կռիւով: Նրանք խելագար են, յեթե չեն հասկանում, վոր սարսափելի պատերազմի մասին մտածելն անգամ բոլոր յերկրների պրոլետարիատի մեջ առաջ ե բերում ցասում ե կատաղութիւն: Բանվորները վոճրագործութիւն են համարում կապիտալիստների շահի համար կրակել մի-մյանց վրա»:

Ահա թե ինչ խոստումներ ե տվել II Ինտերնացիոնալը, ահա այն պարտականութիւնները, վոր նա վերցրել ե իր վրա:

Իսկ ինչպէս ե նա կատարել այդ պարտականութիւնները:

Դեռ պատերազմի նախորդակին յերբ Բեռլինի, Փարիզի, Պետերբուրգի փողոցներում հուզված բանվորները պատերազմի դեմ ցույցեր եյին սարքում, II-ըդ Ինտերնացիոնալի ղեկավարներն արդեն բանակցութիւններ եյին վարում բուրժուազիայի հետ, արդեն պատրաստվում եյին դավաճանելու բանվոր դասակարգի գործին:

1914 VII-30-ին գերմանական սոցիալ-դեմոկրատիան խաղաղութիւնը պահպանելու վերաբերմամբ յուր հուշը դրել եր Վիլհելմ կայսեր վրա: Սոցիալիզմի գծով դավաճանները ճանապարհներ եյին փնտռում դեպի կայսերական գահը, դեպի միևնու-տրական պուրտֆեյները:

«Լինելով միապետութեան սկզբունքային հակառակորդներ յեւ ապագայի նպատմամբ այդպիսին մնալով, հաճախ կատաղի պայքար վարելով իմպերիալիստական թագը կրողի դեմ—գրում եյին նրանք—մենք այնուամենայնիւ բաց ե ըրաց խոստովանում ենք ե այժմ վոչ առաջին անգամ, վոր Վիլհելմ II-ըդն այս վեր-ջին տարիները յուր վարմունքով ցույց ե տվել իրեն վորպէս խաղաղութիւն պահպանելու անկեղծ բարեկամ»: Այսպէս, կայսերական սոցիալիստները, սոցիալիստ—վիլհելմիստները մասսաներին պատրաստում են բուրժուազիայի այն կեղծ ու սուտ մեկնաբանութեան, վոր իբր թե ստիպված եյին պատերազմն ընդունելու, վոր իբր թե պաշտպանվելու կարեւորութիւն կար:

II Ինտերնացիոնալի ոպորտունիստական հերոսների վարմունքը Ֆրանսիայում կամ ուրիշ յերկրներում զանազանվել ե արդյոք գերմանական սոց. դեմոկրատ. ղեկավարների վարմունքից: Ասենքին:

Նրանք նույնպէս աշխատել են վոչ այնքան մերկացնելու իրենց կառավարութիւններին, վորքան նրանց ներկայացնելու վորպէս խաղաղասեր յեւ հաշտութեան ծարավ մարդիկ:

Ֆրանսիական պարլամետական սոցիալիստական խմբակի ղեկավարացիան (14 թ. III-29) պաշտպանում ե Ֆրանսիայի քաղաքականութեան խաղաղասեր լինելու պատրանքը, այսինքն Ֆրանսիական կառավարութեանը ե նրա խաղաղասեր ազդեցութիւնը Ֆեմլրոպայում:

Բայց այդ նոտաները դարձյալ թաղված եյին պատերազմի դեմ յեղած բողոքների յեւ ղեկավարացիաների տարափի մեջ: Պատերազմի սկսվելը հրաշքով փոխեց պատկերը: Ոպորտունիստական գաղափարները, վոր մշակվում ե հասունանում եյին II Ինտերնացիոնալի շրջաններում, կենտրոնի ղեկավարների՝ Կաուցկու ե այլոց անգործունեյութեան հետ միասին, Շտուտգարտի, Քիմ-նիցի, Բրյուսելի, Փարիզի խայտառակութեան մատնված ե մոռացված վճիռների փոխարեն, միանգամից յերկվան յեկան ե դարձան II Ինտերնացիոնալի ղինվորական ծրագիրն ու դրոշակը:

VII-4-ը հռչակավոր թիվ ե սոցիալիզմի պատմութեան մեջ: Գերմանական ռալիստագի սոցիալ-դեմոկրատական Ֆրակցիան իրագործում ե իր նախորդակին ընտունված (78 ձայնի մեծամասնութեամբ ընդդեմ 14) վճիռը՝ քվեարկել հոգուտ զինվորական վարկի: Սոց. դեմ. Ֆրակցիայի ղեկավարացիան, վոր ստորկները, սոցիալիզմի դավաճանները վորպէս հավատարիմ հպատակներ տանում եյին կանցլերին, վոր նա աչքի անցկացնի ե իր հավանութիւնը տա, ասում ե. «Մենք այժմ պետք ե ձայն տանք վոչ թե հոգուտ պատերազմի կամ նրա դեմ, այլ պետք ե վճենք լեռկրի պաշտպանութեան համար կարելի միջոցներ բաց թողնելու հարցը»: Դավաճանութիւնն արդարացնելու համար առաջ ե բերված ոռոտական վտանգի պատճառարանութիւնը. «Կարելիոր ե այդ վտանգի առաջն առնել, ապահովել մեր սեպհական հայրենիքի կուլտուրան ե անկախութիւնը: Ուրեմն վարվենք այնպէս, ինչպէս մենք միշտ հայտարարել ենք. մենք հայրենիքը չենք թողնի առանց ողնութեան: Մենք գիտակցում ենք, վոր Ինտերնացիոնալի հետ համախոհ ենք գործում, վոր միշտ ճանաչել ե ամեն մի ժողովրդի անկախ լինելու իրավունքը ե ինքնապաշտպանութիւնը, ե նույնպէս համերաշխ ենք նրա հետ դատաւիտելով ամեն մի նվաճողական պատերազմ»:

Սոռացված են պարտականութիւնները, վոտնակոխ են ար-

ված խոստումները, յեւ սոց. դեմոկ. կանգնելով հայրենիքի պաշտպանութեան պաշտոնական հողի վրա, դնելով կուսակցութեան հզոր ապարատը՝ ս. դ. մամուլն ու պրոֆմիութեանները գինւորական կլիկի տրամադրութեան տակ, ծառայութեան մտավ գերմանական բուրժուազիայի, Վիլհելմի մոտ:

Պատերազմի հենց հետեւյալ ուրը, փաթաթելով բանվոր դասակարգի կարմիր դրոշակը յեւ թքելով նրա վրա, եւ զարգրելիութեան չըմնաց, վոր չը գործեր սոցիալ-դեմոկրատիան: Ավստրիական ս. դ. որգան «Արքայտեր Յայտունգը» 1914 թ. 5/VIII գրում եր. «Մենք չենք մոռանա ոգոստոսի 4-ը: Այն պատկերը, վոր ներկայացնում եր գերմանական րայխստագը, ամբողջ ազգի ներկայացուցիչը, անջնջելի կերպով կը հիշվի ամբողջ գերմանական ժողովրդի կողմից և պատմութեան մեջ պիտի նկատվի վորպես գերմանական հոգու ուժգին ու հպարտ վոգելորութեան ուր»:

Պրոլետարիատը յերբեք չի մոռանա այդ ուրը: Յեւ նրա տասնամյակին, ցուցադրելով յուր կատաղի ատելութունը դեպի պատերազմի հանցնալորները, չի մոռանա նրա ոժանդակիչներին — սոցիալ-դեմոկրատ. և կասի, վոր նրանք իրենց ճակատագիրը կապելով բուրժուազիայի ճակատագրին, նրա հետ եւ պիտի վայելեն բանվոր դասակարգի արհամարհանքն ու ատելութունը:

Ֆրանսիական սոցիալիստները հայտարարել են, վոր նրանք իրենց պարտքն են համարում պաշտպանելու հաշտութեան կարոտ հանրապետական Յերոպայի անկախութիւնն ու անձեռնմխելիութիւնը:

Բելգիական բանվորական կուսակցութեան Բարձր Խորհուրդը հայտարարել է՝ «Սոցիալ-դեմոկրատիան պատասխանատու չի այդ արյունահեղութեան համար: Նա կանգ չի առնի վոչ մի բանի առաջ, վոր զգուշացնէ ժողովրդներին, վոր խանգարէ խելագար սպառազինմանը, վորպեսզի կասեցնէ այն դժբախտութիւնը, վոր սպառնում է վոչնչացնել Յերոպայի ամբողջ ժողովրդին»:

Բայց այժմ չարագործութիւնն արդեն կատարվել է և ճակատագրի կամբով այժմ մենք պետք է ամեն ջանք գործ դնենք, վորպեսզի թույլ չտանք թշնամուն ներս խուժել մեր յերկիրը:

Մենք այդ կանխք եւ ավելի մեծ վոգելորութեամբ, քանի վոր բարբարոս միլիտարիստներից մեր չեզոքութիւնը և մեր յերկրի անկախութիւնը պաշտպանելով, մենք պիտի գիտակցենք, վոր ծառայել ենք դեմոկրատիայի շահերին և Յեւրոպայի քաղաքական ազատութեան:

Բրիտանական սոցիալիստական կուսակցութիւնը յուր մասին ֆեստում ասել է.

«Մեզ սպառնացող մեծ պատերազմը հանկարծ բռնկվեց: Ավստրիայի հարձակումը Սերբիայի վրա, կովի մեջ քաշեց Յերւյակ Միութիւնը և Յերրյակ Համաձայնութիւնը, իսկ մեր հայրենիքը նետվել է կովի մեջ շնորհիւ այն բանի, վոր Գեմանիան կռիւ է հայտարարել Բելգիային. այն պատճառով, վոր այդ փոքրիկ պետութիւնը մերժել է, հոգուտ հարձակվող կողմի, խախտել յուր յերաշխաւորված չեզոքութիւնը»:

Ուրիշ յերկրների սոցիալիստական կուսակցութիւնների դեկլարաների մեծամասնութիւնը (չնչին բացառութեամբ) ավելի կամ պակաս ցինիղմով նույնպէս դավաճանել է, անցնելով իրենց բուրժուազիայի հայեցակետին կամ զլորվելով դեպի այդ բուրժուազիան:

Սոցիալիզմի դավաճանները գերմանական կառավարութեան համար գինւորակոչութեան կետեր դարձրին գերմանական խոշոր պրոֆմիութեանները. տրեդյունիոնների դեկլարաները ոգտագործեցին նրանց, վորպէս գինւորագրելու բյուրոներ:

Ամստերդամի Խստերնացիոնալի ժամանակակից դեկլարաներից մեկը, Ֆրանսիական սինդիկալիզմի ռենեգատ՝ Ժուլի վոշ թե վախից դրված, այլ յուր խղճի համաձայն ազատում է հայրենի բուրժուազիային:

Սոցիալ-դավաճանական կուսակցութիւններն իրենց ներկայացուցիչներն յեն ուղարկում բուրժուական կառավարութիւններին մեջ մասնակցելու (Ժյուլ Գեգ, Սամբա, Թոմո, Հենդերսոն, Վանդերվելդե): Յեւ նրանք Ո ինտերնացիոնալի հեղինակութեամբ բողարկելով բուրժուազիայի վոճրագործութիւնները, ժողովրդների առաջ բուրժուազիայի հետ եւ պատասխանատու յեն նրանց համար: Ուր Խստերնացիոնալի տեսաբանները, կաուցլին, Վիկտոր Ադլերը և ուրիշներն իրենց վրա վերցրին մի կեղտոտ գործ — բացատրել, հիմնավորել քողարկել սոցիալ-պատրիոտների դավաճանական դիրքը: Հետևողական սոցիալ-պատրիոտներն աշակցում եյին պատերազմին, իսկ կենտրոնը, ինչպէս որինակ Գեմանիայի «անկախները» բավականանում եյին խոսքերով բողոքելով և քծնում եյին ինտերնացիոնալիստներին ու խանգարում հեղափոխական կովին:

Ո ինտերնացիոնալի սրանից ավելի խայտառակ, սրանից ավելի ծանր սնանկութիւնը չեր կարելի յերեւակայել:

Պատերազմի հանցավորները, իմպերիալիստները յիվ նրանց աջակից սոցիալ—պատրիոտները պատերազմի սկզբում պնդում էին, վոր նրանք միմիայն պաշտպանում են իրենց հայրենիքը: Պատմությանը հաճելի յեր մերկացնել նրանց մինչև վերջ: Բրեստի հաշտությամբ, Ֆինլանդիայում ու Ուկրաինայում կատարած արյունահեղությամբ գերմանական իմպերիալիզմը ցույց տվավ իր ամբողջ դեմքը: Համաձայնական պետութիւնների իմպերիալիզմը վերստի հաշտությամբ, Սեվրի դաշնագրով պարզեց յուր թալանիչ ելությունը: II Ինտերնացիոնալը բարեխղճորեն ընթացավ իմպերիալիզմի հետևից, II Ինտերնացիոնալը յուր պայքարով ուստական հեղափոխութիւն դեմ, Գերմանիայի, Ֆրանսիայի ու գաղութների բանվորների սպանութիւններով իրեն խայտառակության մատնեց:—Կարլ Լիբկինսեռի, Ռոզա Լյուքսեմբուրգի, հազարավոր գերմանական պրոլետարների, ինչպես և պատերազմում սպանվածների արյունը ծանրանում է II Ինտերնացիոնալի խղճի վրա:

Պրոլետարիատը յիվ աշխատավոր մասսաները յերբեք չեն մոռանա, վոր վերստի թալանիչ դաշնագիրը վավերացվել է II Ինտերնացիոնալի կողմից: Այդ դաշնագրի տակ փայլում է թագավորական մինիստր, սոցիալիզմի դավաճան, դեղին ինտերնացիոնալի հպարտութիւն և զարդ կազմող վանդերվելդի ստորագրությանը:

II Ինտերնացիոնալն ի դեմս Մակդոնալդի հոգուտ արխատոկրատիայի, ֆինանսական և արդյունաբերական կապիտալի վարած քաղաքականության, բուրժուազիայի կողմից ստրկացրած Հնդկաստանի և ուրիշ գաղութային յերկրների աշխատավորության առաջ մերկացրեց իրեն:

II Ինտերնացիոնալն արատավորեց իրեն Գերմանիայում, Բուլղարիայում, Հունգարիայում, Իտալիայում և մի շարք ուրիշ յերկրներում բացարձակ կերպով աշխատակցելով բանվոր դասակարգի դահիճ ֆաշիստների հետ: 1923 թ. աշնանը Գերմանիայում բուրժուական իշխանութիւնը յուր գոյութիւնը կարողացավ պահպանել շնորհիվ սոցիալ-դեմոկրատիայի ոգնության և այդ այն ժամանակ, յերբ բուրժուական բանակի ուժերը սարսափելի լքված էին, իսկ հեղափոխական շարժումը յուր վոզեվորութիւն գազաթնակեալին եր հասել: Գերմանիայում բուրժուական հանրապետութիւնը սոցիալ-դեմոկրատ, սիստեմատիկ աջակցությամբ ձեռք

ե բերում միապետական զինվորական դիկտատուրայի բոլոր հատկութիւնները:

Այսպիսի պայմաններում, նոր պատերազմի դեպքում ընդհանուր գործադուլ հայտարարելու մասին II Ինտերնացիոնալի ու Ամստերդամի պրոֆմիութիւնների Ինտերնացիոնալի արած բոլոր հայտարարութիւնները չի կարելի այլ կերպ ընդունել, քան վորպես ամենալպիւրջ խաբէյութիւն:

1914—18 թ.թ. համաշխարհային պատերազմի փորձից, II Ինտերնացիոնալի և Ամստերդամի պրոֆմիութիւնների Ինտերնացիոնալի հերոսների կապիտալիստական բեյակցիայի ամենամութ ուժերի հետ հետագա աշխատակցութիւնից հետո, վաղորդ կարելի չէ ասել, վոր պատերազմի դեպքում ընդհանուր գործադուլ հայտարարելու բոլոր խոստումները քաղաքական ամենախոշոր շանտաժ են:

II Ինտերնացիոնալը չի կարող իրագործել այդ խոստումները, յիժե նա նույն իսկ ուզենա: Կարելի չէ կասկածից դուրս համարել, վոր նոր պատերազմի հենց առաջին որվանից միջազգային սոց. դեմոկ. ծառայության կը մտնի կռիւղ յերկրների բուրժուազիայի մոտ և կոչ կանի Ֆրոնտի յերկու կողմերում գտնվող բանվորներին, աջակցել իրենց բուրժուական հայրենիքներին:

Պատերազմի դեմ հաջող կերպով պայքարելու կարևոր պայմանն է հաղթահարել II Ինտերնացիոնալը, բանվոր դասակարգի մեջ վոչնչացնել ոպորտունիզմը:

Ներկայումս Անտանտի յերկրներում (Անգլիա և Ֆրանսիա) իշխանութիւնն անցնում է բուրժուազիայի ձախ ելեմենտների ձեռքը, վորոնք ընթանում են II Ինտերնացիոնալի հետ միացած: Մենք ականատես ենք պացիֆիստական քարոզի մի վորոշ կենդանության և կոմպրոմիսիների ոգնությամբ հաղթող և հաղթված յերկրների հարաբերութիւնների կարգավորման փորձին (եթապերտների հանձնաժողովի վորոշումները): Այդ փորձը, վոր աջակցութիւն է գտնում սոց. դեմ. կուսակցութիւնների և Ամստերդամի Ինտերնացիոնալի կողմից նոր սարսափելի տանջանքներ և բերում Գերմանիայի բանվոր դասակարգի համար, վորոնց հաշվին Գերմանական բուրժուազիան մտածում է յուր պարտքերը վճարել Անտանտին: Սակայն հակառակ սոց. դեմոկ. ձգտման, գերմանական բանվոր դասակարգը թուլ չի տա նոր լուծ դնել յուր վզին, իսկ գերմանական բուրժուազիան բռնված շովինիզմի և նացիոնալիզմի տենդով, կամավոր կերպով չի զիջի յուր դիրքերը: Անտանտի յերկրների բարեկեցութիւնը չի կարելի ապա-

հովել մինչև վերջին ծայր ավերված Գերմանիայի հաշվին, յեթե նույն իսկ այդ ուղենա գերմանական բուրժուազիան: Իմպերիալիստական հաշտության հակասութունները քողարկելու փորձը, ինչպես և եքսպերտների վորոշումները կյանքում կիրառելով դա-լիք պատերազմի վտանգը հեռացնելու փորձը, Յեվրոպայի և ամ-բողջ յերկրագնդի բանվորներին վոչինչ չի տա, բացի նոր պատ-րանքներից ու նոր խաբեյություններից: Անխուսափելիորեն մո-տեցող պատերազմը վոչ թե բուրժուազիայի ու սոցիալ-դեմո-կրատիայի դաշնակցությամբ կարող է կասեցվել, այլ բանվոր դասակարգի հեղափոխական կռիվով, վոր ղեկավարում է Կոմմուն-իստական Խնտերնացիոնալը, վոչ թե կապիտալիստական դիկտա-տուրայով, վոր աջակցութուն է գտնում սոցիալ-դեմոկրատիայի յերեսպաշտությամբ և խաբեյությամբ, այլ կապիտալիզմի տա-պալումով և պրոլետարիատի դիկտատուրայի իրականացմամբ: Այդ ասում է մեզ ամենից առաջ համաշխարհային պատերազմի 10-ամյա տարեգարձը: Նա կոչ է անում ամբողջ յերկրագնդի բանվոր դասակարգին ու աշխատավորության իրենց ուժերն ի մի խմբելու կապիտալիզմի, սոցիալ-դավաճանների, պատերազմ առաջացնողների և նրանց աջակիցների դեմ:

Համաշխարհային պատերազմը, վորը սոցիալ-դավաճանների անմիջական աջակցությամբ բացարձակ կերպով կոփվում է իմպե-րիալիստական բոլոր յերկրներում, կարելի՞ չէ կասեցնել միմիայն պրոլետարական հեղափոխության հաղթությամբ նախ Յեվրոպայում ապա յեվ ամբողջ աշխարհում: Իսկ յեթե պատերազմը բռնկվի, այն ժամանակ նրա դեմ մղվող պայքարը հաջող կլինի այն դեպքում միայն, յեթե նա տարվի հեղափոխական ճանապարհներով: Ոորհր-դային Միության բանվորներն ու գյուղացիներն, վորոնց ղեկավա-րում է Ռուսական Կոմմունիստական Կուսակցութունը համաձայն լենինի ավանդի, իմպերիալիստական պատերազմից կարողացան դուրս գալ հեղափոխական ճանապարհներով, այսինքն քաղաքացի-ական կռիվով, վորի շնորհիվ և ծնվել է առաջի պրոլետարական յերկիրը: Համաշխարհային պատերազմը հայտարարելու տասնա-մյակի շարաթին Կոմմունիստական Կուսակցությունները կոչվում են ի մի խմբելու հեղափոխական բոլոր ուժերն աշխատանքի իշխանությունը ձեռք բերելու հեղափոխական պայքարի համար, համաշխարհային մաշտաբով խորհրդային իշխանություն կազմա-կերպելու համար, վոր միայն կարող է ադատել մարդկությունը պա-տերազմի սարսափներից: Միաժամանակ ամբողջ յերկրագնդի աշ-խատավորությունը պետք է պատրաստ լինի պատերազմի բռնկման դեպքում նրա դեմ հեղափոխական ճանապարհներով պայքարելու:

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Գ Ի Ն Ն Ե

1. Կովայենկո.—Քաղաքական գրագիտություն. . . 25 կ.
3. Ա. Մարտունի.—Հովհ. Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը . . . 15 կ.
5. Դեպի նոր կյանք—պիես
6. Կարմիր ազգիկի հուշատետրը.
8. Վ. Նիկոլսկի.—Ինչպես ոգտագործել կենդանի-ներին աղբը լավագույն կերպով . . . 20 կ.
9. Ն. Կուլագին.—Մեղուներին կերակրելը. . . 40 կ.
10. Մ. Փ. Իվանով.—Գյուղատնտեսական թռչունի մուգումը և գիրացումը . . . 20 կ.
11. Վ. Խարչենկո.—Հորթերի խնամքը . . . 15 կ.
12. Ն. Կուլագին.—Շրջանակավոր փեթակի ընտրութունը. . . 15 կ.
13. Վ. Խոդորովսկի.—Վ. Ի. Լենին. . . 20 կ.
15. Պ. Պ. Զվորիկին.—Բաղամայա մանդատու խոտա-սերմերի կուլտուրան . . . 25 կ.
16. Ն. Յանուշևսկի.—Անդրկովկասում բամբակ մշակելու ձեռնարկ . . . 20 կ.
17. Դ. Մ. Գեդդա.—Հողի մշակումը . . . 25 կ.
18. Գյուղացիական խաղարկու փոխառություն
19. Կ. Ա. Գորբաչև.—Մեղուների փտախտը . . . 30 կ.
20. Յե. Բոգդանով.—Ինչպես եժանացնել կաթի արտադրությունը. . . 30 կ.
22. Ընկ. Անդրեյևի
24. Ընկ. Ստալինի
25. Կալինին յեվ Կրուպսկայա.—Աշխատանքը գյուղում. Զեկուցում Ռ. Կ. Կ. XIII համագումարում: . . .
26. Ընկ. Մոլոտովի գեկուցումը
27. Կոմիտեներն Մանիֆեստը:

Դիմել՝

Издательство „Мартакоч“.
Тифлис, ул. Троицкого № 6.

2013



